ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ն. Ս. Օ. Տ. Տ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑՆ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

(1–10 փետրվարի, 2019 թ.)

Փետրվարի 1-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն եպս. Նաջարյանի եւ թեմական խորհրդի հրավերով, հովվապետական այցով ժամանեց Ավստրալիա։ Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը եւ գավազանակիր Հոգեշնորհ Տ. Անանիա աբղ. Ծատուրյանը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ նրա շքախմբին Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի օդանավակայանում դիմավորեցին թեմական առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն եպս. Նաջարյանի գլխավորությամբ թեմի եկեղեցականները, թեմական եւ ծխական, ինչպես նաեւ հայկական կազմակերպությունների շուրջ քսան ներկայացուցիչներ։

Փետրվարի 2. Փետրվարի 2-ին Սիդնեյի Սուրբ Հարություն առաջնորդանիստ եկեղեցում տեղի ունեցավ «Հրաշափառ»-ի արարողություն։ Եկեղեցու առջեւ Ամենայն Հայոց Հայրապետին խաչվառներով, դրոշակներով եւ բարիգալստյան պաստառներով դիմավորեցին հոգեւոր դասը եւ թեմական ու ծխական խորհուրդների անդամներ, երգչախմբերի անդամներ, դպրոցական աշակերտներ եւ սկաուտներ։

Աղ ու հացի օրհնության արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը շարականների երգեցողության ներքո հանդիսավորապես մուտք գործեց եկեղեցի, որտեղ Հայոց Հովվապետի օրհնաբեր այցին սպասում էին ավելի քան 400 հավատացյալներ։ Օրհնելով բարեպաշտ

հայորդիներին՝ Նորին Սրբությունն ուղղվեց դեպի Սուրբ Խորան, որտեղ կատարվեց Եկեղեցու երկրպագության կարգը։

Այնուհետեւ եկեղեցական դասի, թեմական, ծխական խորհուրդների եւ համայն ավստրալահայության անունից Ամենայն Հայոց Կաթողիկոսին ողջունեց եւ բարի գալուստ մաղթեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն եպս. Նաջարյանը՝ հրավիրելով Նորին Սրբությանն իր հայրական օրհնությունը բաշխելու ներկա ժողովրդին։

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍԻԴՆԵՅԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(2 փետրվարի, 2019 թ.)

«Ինչպէս որ ընդունեցիք Քրիստոս Յիսուսին՝ Տիրոջը,
այնպէս էլ ընթացէք Նրանով՝ արմատաւորուած
եւ կառուցուած Նրա վրայ, հաստատ մնալով հաւատի մէջ»
(Կող. Բ. 6-7)։

Սիրելի՛ Առաջնորդ Սրբազա՛ն, Գերաշնո՛րհ, Հոգեշնո՛րհ, Արժանապատի՛վ հայրեր, Թեմական Խորհրդի եւ եկեղեցական համայնքային վարչության բարեջա՛ն անդամներ, սիրելի՛ բարեպաշտ հավատավոր զավակներ Սիդնեյ քաղաքի, սիրելի՛ երիտասարդներ եւ անուշիկ հայորդիներ.

Հայրապետիս հոգում գոհաբանություն է առ Աստված, որ Իր շնորհով վերստին այցելել ենք ձեզ՝ Ավստրալիայում բնակվող եկեղեցասեր ու ազգասեր հայորդիներիդ։ Եկել ենք բերելու ձեզ օրհնությունն ու լույսը Քրիստոսահիմն եւ Լուսավորչահաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի։ Եկել ենք բերելու ձեզ սերն ու քաջալերանքը հայրենաբնակ ձեր հոյրերի եւ եղբայրների, որոնք այս օրերին հույսով, բարի սպասումներով, լավատեսությամբ կերտում են իրենց նոր կյանքը հայրենի մեր երկրում՝ Հայաստանում եւ Արցախում։ Մենք անհուն բերկրանքով փառք ենք մատուցանում Երկնավորին, որ ձեզ հետ միասին աղոթք ենք առ Աստված բարձրացնում աշխարհասփյուռ Մեր զավակների՝ հայոց հոտի բարօր, ապահով եւ առաջընթաց կյանքի համար, մեր հայրենիքի ապահով եւ խաղաղ կյանքի համար։

Այս ուրախարար եւ ոգեշունչ պահին, սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, առաքյալի հատկանշական խոսքն ենք մտաբերում, որ մշտական կոչ է՝ ուղղված ամենքիս. «Ինչպէս որ ընդունեցիք Քրիստոս Յիսուսին՝ Տիրոջը, այնպէս էլ ընթացէ՛ք Նրանով՝ արմատաւորուած եւ կառուցուած Նրա վրայ, հաստատ մնալով հաւատքի մէջ»:

Դարերի ընթացքում դժվարություններ ու փորձություններ է դիմագրավել մեր ժողովուրդը, ցեղասպանության հետեւանքով ցրվել աշխարհով մեկ, բայց ամենուր, առաքյալի պատվերի համաձայն, պահպանել է հավատարմությունը առ Աստված, համբերել նեղությունների եւ գովաբժան գործերով բարձրացրել իր կյանքը: Ինչպես որ աշխարհասփյուռ հայ համայնքներում, այստեղ՝ Ավստրալիայում նույնպես հայ համայնքի պատմությունը եղել է փորձությունների ու դժվարությունների հաղթահարում, նոր հաջողությունների կերտում, Մայր հայրենիքին մեր Սուրբ Եկեղեցուն ու հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հավատարմության գովելի վկայություն: Դուք այստեղ համախմբվել եք աշխարհի տարբեր համայնքներից եւ բերելով ու պահպանելով ձեր ավանդույթները, դրանց գեղեցիկ բազմազանությամբ հարստացրել ու բարեզարդել եք Սիդնեյի հայ համայնքը: Անցյալ դարի կեսերից այստեղ համայնքի հաստատումը եւ Սուրբ Հարություն եկեղեցու հիմնումը ու նրա շուրջ համախմբումը առավել աշխուժացրել է ազգային եկեղեցական կյանքը Սիդնեյի հայության: Ծխական կյանքի առաջընթացին մեծապես նպաստել են նաեւ հիմնադրված հայալեզու դպրոցները, տիկնանց եւ երիտասարդաց միությունները, տարեցների խնամքի կազմակերպության հաստատումը, ազգային բարեսիրական եւ մշակութային այն բոլոր կառույցները, որ հիմնադրվել են եւ գործում են անձնվեր ձեր ջանքերով:

Այսօր, սիրելինե՛ր, նույն նախանձախնդիր ոգով դուք զորացնում եք ազգային-եկեղեցական ձեր կյանքը, շեն ու բարօր պահում ձեր եկեղեցին: Բարեպաշտ ձեր ընթացքը դուք զարդարում եք եկեղեցանվեր գործերով, մանուկ սերնդի հոգատար դաստիարակությամբ՝ ջանալով ձեր զավակների հոգում սերմանել հավատքը առ Աստված եւ սերը առ ազգն ու հայրենին, որպեսզի նրանք էլ՝ արմատավորված Քրիստոսին, ընդունեն Աստծու շնորհները եւ շարունակեն մեր ժողովրդի քրիստոնեավայել եւ ազգային կյանքը: Ձեր ջանքերի բարի արդյունքները, վստահաբար, բերկրությամբ են լցնում համայնքի յուրաքանչյուր անդամի հոգին, ինչպես եւ հայոց Հայրապետիս հոգին:

Ավստրալիայի օրհնյալ երկրում հայ համայնքի հոգեւոր-եկեղեցական անդաստանի բարեզարդությունը Աստծուց օրհնյալ պտուղներն են այստեղ բնակվող մեր ժողովրդի զավակների հավատքի, ազգասիրության եւ

հայրենանվիրումի: Դուք թեեւ ապրում եք հայրենիքից եւ Սուրբ Էջմիածնից հեռու, սակայն հայրենիքի եւ Սուրբ Էջմիածնի սերը մշտամնա բնակվում են ձեր մեջ՝ զորացնելով ու ոգեշնչելով ձեզ: Մենք գիտենք, որ ձեր սիրտը բերկրում, ցնծում է հայրենիքի յուրաքանչյուր ձեռքբերումով, գիտենք, որ դուք, այստեղ ձեր բարեշեն կյանքն ունենալով՝ նաեւ ձեր ներդրումն եք բերում հայրենական մեր կյանքին: Այո՛, սիրելինե՛ր, զորեղ սփյուռքը նաեւ ուժ ու զորություն է հայրենիքին, ինչպես հայրենիքը ուժ ու զորություն է սփյուռքի համար, պատվարը սփյուռքի:

Սիրելինե՛ր, ձեր հոգեւոր միասնականության մեջ է, որ արթուն կմնա ձեր եւ ձեր զավակների ազգասեր ու եկեղեցասեր ոգին: Այդ միասնականությամբ է, որ ձեր հայրերը դիմակայել են բոլոր փորձություններին, հաղթահարել բոլոր դժվարությունները: Այդ միաբանությամբ եւ դուք պիտի զորացյալ պահեք ազգային կյանքը Սիդնեյ քաղաքում եւ պիտի արդյունավորեք սերը առ հայրենին եւ սերը դեպի մեր Սուրբ եկեղեցին եւ նրա աստվածակառույց հոգեւոր կենտրոն Սուրբ Էջմիածինը:

Հայրապետիս համար զոհունակություն է նաեւ, որ դուք այստեղ, սիրելի՛ հայորդիներ, բարձր եք պահում մեր քրիստոնյա ազգի բարի համբավը, բարի գործերով հավելում նրա հեղինությունը հաչս օտարաց: Գիտենք, որ հայրենիքից հեռու՝ բազում դժվարություններ, մարտահրավերներ կան ձեր կյանքում, հատկապես նոր սերնդին, ձեր զավակներին, անուշիկ հայորդիներին ազգային ոգով ու նկարագրով կրթելու եւ դաստիարակելու համար, եկեղեցական եւ ազգային կյանքում նրանց ներգրավված պահելու համար:

Առկա բոլոր խնդիրներով հանդերձ, մենք տարակույս չունենք, որ դուք պիտի շարունակեք մեր ժողովրդին հատուկ արիությամբ ու տոկունությամբ պահպանել հոգեւոր-ազգային արժեքները, հաստատուն ու անխաթար պահել ձեր բարեպաշտ կյանքը՝միշտ հիշելով առաքյալի պատվերը. «Ինչպէս որ ընդունեցիք Քրիստոս Յիսուսին՝ Տիրոջը, այնպես էլ ընթացէք Նրանով՝ արմատաւորուած եւ կառուցուած Նրա վրայ, հաստատ մնալով հաւատի մէջ»: Հավատքով մենք ապրել ենք, հավատքով մենք արարել ենք, կերտել փառապանծ էջերը մեր պատմության: Հավատքով մենք հաղթանակել ենք, հավատքով մենք պիտի շարունակենք մեր ընթացքը՝ կյանքի կոչելով ազգային մեր իղձերը, զորացնելով մեր հայրենիքը, պաշտպանելով մեր արդար դատը եւ ամուր, հաստատուն դարձնելով խաղաղությունը հայրենի մեր սահմաններում: Յուրաքանչյուրս ունենք մեր բաժին պարտքը բերելու այս նվիրական գործում՝ հայրենիքի շենացման, հայրենիքի զորացման, մեր ժողովրդի խաղաղ ու բարօր կյանքի կերտման նվիրական ու սուրբ գործում:

Մեր գնահատանքն ենք բերում ձեզ այն բոլոր ջանքերի ու ներդրումների համար, որով շեն ու պայծառ է պահպանվում հայ կյանքը Սիդնեյում:

Մեր գնահատանքը՝ բարեջան Առաջնորդին՝ Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանին եւ նրան աջակից հոգեւոր սպասավորներին, ովքեր սիրով ու հոգածությամբ իրենց նվիրյալ ծառայությունն են բերում ձեզ, որպեսզի դուք շարունակեք Տիրոջ շավիղներում ընթանալ եւ արգասավորել ձեր կյանքը բարի իրագործումներով: Մեր գնահատանքն ենք բերում թեմական եւ ծխական վարչությանց Մեր նվիրյալ զավակներին, ովքեր նախաձնախնդրությամբ առ հայրենին, առ ազգային եւ հոգեւոր մեր կյանքը՝ բարի ծառայություն են բերում՝ իրենց ժամանակը, իրենց կարողությունները, նաեւ նյութականը ի սպաս բերում համայնքի շենացմանն ու պայծառությանը: Մեր գնահատանքն ենք բերում ձեզ բոլորիդ, սիրելինե՛ր, որ ձեր հավատքով պայծառացնում եք հայ կյանքը Ավստրալիա մեջ, շենացնում եք ազգային մեր հաստատությունները: Թող Տերը Իր Աջի հովանու ներքո պահի ու պահպանի ձեզ, օրհնի ձեր կյանքը, ընտանեկան ձեր հարկերը եւ զարդարի ձեզ երկնային բյուր շնորհներով:

Մեր աղոթքն է, որ Աստված խաղաղության ու բարօրության մեջ պահի Ավստրալիան եւ նրա բարեպաշտ ժողովրդին: Թող Աստված Իր օրհնության ներքո պահի աշխարհասփյուռ ազգիս կյանքը՝ զորացնելով ազգիս զավակներին կերտելու իրենց գալիքը հավատքով եւ մշտապես փառաբանելու մեր Տեր Հիսուս Քրիստոսին այն բոլոր շնորհների, այն բոլոր պարգեւների համար, որ բաշխում է ազգիս հայոց՝ ի Հայաստան, Արցախ եւ ի սփյուռս աշխարհի:

Թող Տիրոջ սերը, շնորհը եւ խաղաղությունը մշտամնա լինեն ձեզ հետ այսօր եւ հավիտյան: Ամեն:

* * *

Պատգամի ավարտին, Հայրապետական մաղթերգի երգեցողությունից հետո հավատավոր հայորդիները հնարավորություն ունեցան մոտենալու Նորին Սրբությանը եւ համբուրելու նրա Սուրբ Աջը եւ ստանալու նվեր խաչիկներ: Այնուհետեւ Սուրբ Հարություն եկեղեցու սրահում տեղի ունեցավ հանդիպում ժողովրդի հետ:

Այնուհետեւ Նորին սուրբ Օծությունը Գերաշնորհ Տ. Հայկազուն եպս. Նաջարյանի ուղեկցությամբ այցելեց Սիդնեյ քաղաքի Սուրբ Երրորդություն հայկական եկեղեցի, որտեղ նույնպես տեղի ունեցավ «Հրաշափառի» արարողություն: Ամենայն Հայոց Կաթողիկոսին եկեղեցու առջեւ

դիմավորեցին եւ թափորով եկեղեցի առաջնորդեցին թեմի հոգեւոր դասը, թեմական եւ ծխական խորհուրդների անդամները, որտեղ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բաշխեց այս առիթով համախմբված համայնքի հարյուրավոր անդամներին։

Համատեղ աղոթքից եւ հայրապետական «Պահպանիչից» հետո Հայկազուն Սրբազանը ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցը Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմ եւ, մասնավորապես, Հայոց Հայրապետի առաջին այցելությունից վեց տարի առաջ վերակառուցված եւ 2014 թվականի հունվարի 5-ին օծված Սուրբ Երրորդություն եկեղեցի, որը դարձավ հոգեւոր տուն հայ համայնքի համար։ Բարիգալստյան խոսքի ավարտին Սրբազանը հրավիրեց Նորին Սրբությանն իր օրհնությունը բերել հավաքված հայորդիներին, իր աղոթքով եւ պատգամով ներշնչել ժողովրդին եւ ամրացնել նրա կապը Եկեղեցու հետ։

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍԻԴՆԵՅԻ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(2 փետրվար, 2019 թ.)

«Քո երեսի լույսը ծագեց մեզ վրայ
եւ ուրախութիւն տուիր մեր սրտերին»
(Սաղմ. Դ. 7-8)։

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ Մեր,

Սաղմոսի գոհաբանությունը Մեր շուրթերին՝ փառավորում ենք Աստծուն, որ պարգեւը շնորհեց Մեզ վերստին այցելելու ավստրալաբնակ հայորդիներիդ, նաեւ առաջին անգամը լինելով՝ այցելելու Սիդնեյի Սուրբ Երրորդություն եկեղեցի, ուրախանալու ձեզ հետ հանդիպումով եւ վերապրելու մեր միասնական աղոթքի ու համախմբման ջերմությունը։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերել ենք ձեզ սեր եւ օրհնություն, ձեր կարոտյալ սրտերին բերել ենք ողջույն հայրենի մեր երկրից, օրհնություն ենք բերել ձեզ մեր նվիրական սրբավայրերից։ Հայրապետիս հոգին լեցուն է բերկրանքով եւ նվիրական զգացումներով, քանզի տեսնում ենք ձեզ այսպես միասնական ու համախումբ, ուրախության ժպիտները ձեր դեմքերին։

Համատեղ ջանքերով դուք ձեռք բերեցիք եւ բարեզարդեցիք Սուրբ Երրորդություն այս եկեղեցին, որպեսզի աղոթքի մշտամնա տուն ունենաք, Աստծու շնորհները վայելեք նրա խնկաբույր կամարների ներքո եւ պահպանեք ձեր ազգային-հոգեւոր կյանքը, սրբություններն ու ավանդույթները եւ նվիրական արժեքները:

Մեր Սուրբ Եկեղեցուն հավատարմությամբ մեր ժողովուրդը անցել է պատմության փորձություններ միջով, հաղթանակներ կերտել ու հարատեւել որպես ազգ՝ իր հավատքով, պատմությամբ, մշակույթով եւ ինքնությամբ: Ձեր ձեռքբերումներն ու հաջողությունները հնարավոր են դարձել, քանզի այստեղ բնակություն հաստատած ձեր հայրերը իրենց զավակներին՝ ձեզ կրթել ու աճեցրել են ազգային ու հոգեւոր մեր ժառանգությամբ՝ կարեւորելով ինքնության պահպանությունը, զորացնելով համայնքային կյանքը ազգային, բարեսիրական, կրթական հաստատություններով: Նրանք ձեր հայացքներն ու սրտերն ուղղել են դեպի հայրենին ու մեր Սուրբ Եկեղեցին, որը մեր ժողովրդի հոգու ապաստանն է, ակունքը հավատքի ու Տիրոջ շնորհների: Ա՛ռ Աստված ձեր ապավինությամբ ու հայրենյաց սիրով նորովի պիտի արդյունավորվի ձեր համայնքի կյանքը, քաջություն եւ ուժ պիտի ունենաք հաղթահարելու բոլոր մարտահրավերները, եւ Սուրբ Երրորդություն եկեղեցու խորանից ճառագող կենարար լույսը պիտի լուսավորի ձեր, ձեր զավակների կյանքի ուղին, եւ դուք պիտի շարունակեք գոհաբանել Տիրոջը՝ սաղմոսերգուի հետ ասելով. «Քո երեսի լոյսը ծագեց մեզ վրայ, եւ ուրախութիւն տուիր մեր սրտերին»:

Սիրելի՛ բարեպաշտ, հավատավոր ժողովուրդ, գիտենք, որ այստեղ ձեր հաջողությունների, բարի իրագործումների կողքին նաեւ դժվարություններ եք դիմագրավում: Կանգնած եք հայապահպանության, ազգային ավանդներին, հայրենյաց ժառանգությանը հավատարիմ մնալու խնդիրների առջեւ, որոնք անխուսափելիորեն հառնում են հայրենի հողից հեռու, այլ միջավայրում ապրելու պայմաններում: Բայց դուք գիտեք զորությունը հավատքի կյանքի եւ բերում եք վկայությունը նվիրումի ու հավատարմության մեր արժեքներին, ազգային գաղափարներին, հայրենիքին, մեր Սուրբ Եկեղեցուն: Հայրապետիս հորդորն է, սիրելի՛ զավակներ Մեր, որ շարունակեք արարել, ստեղծագործել աստվածապարգեւ ջերմեռանդ սիրով, սեր՝ Եկեղեցու եւ ազգի հանդեպ, նվիրում՝ ընտանիքի ու բարեկամի հանդեպ, հավատարմություն ու նախանձախնդրություն՝ Ավստրալիայի ու մեր Մայր հայրենիքի հանդեպ, բոցավառ ու անմար սեր՝ քրիստոնեական մեր ժառանգության ու ավանդների հանդեպ: Ամուր պահեք եկեղեցասեր ձեր ոգին, ձեր հավատավոր ընթացքը, եւ երկնահեղ շնորհներով, զորավոր աջակցությամբ Սուրբ Երրորդության, Ում

անունը կրում է ձեր նվիրական եկեղեցին, պիտի հասնեմ առավել մեծ հաջողություններ եւ բարիքներ՝ սաղմոսների գոհաբանությամբ փառավորելով երկնավոր մեր Տիրոջը. «Քո երեսի լոյսը ծագեց մեզ վրայ, եւ ուրախութիւն տուիր մեր սրտերին»:

Մենք հավատում ենք, սիրելինե՛ր, որ Աստված պիտի պարգեւի մեր ժողովրդին այն օրհնյալ օրը, երբ ազգիս զավակները այս օրհներգով պիտի համախմբվեն Արարատի շուրջ՝ մեր հայրենիքի խաղաղ ու անամպ երկնքի ներքո եւ պիտի կերտեն իրենց լուսավոր երազների հայրենիքը՝ պայծառ գալիքով մեր ժողովրդի: Մենք հայցում ենք Տիրոջ զորակցությունը, որ ազգս հայոց միասնական ջանքերով իրականացնի դարավոր մեր այս իղձն ու երազը:

Մեր հանդիպման այս առիթով հոգու խնդությամբ Մեր գնահատանքն ենք բերում եկեղեցական վարչական մարմիններին իրենց նվիրյալ ծառայության համար եւ մաղթում բարեբեր արդյունքներ համայնքային կյանքում: Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Ավստրալիո եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանին, նրան աջակից բոլոր սպասավորներին մեր Սուրբ Եկեղեցու՝ մաղթելով ուժ եւ կորով, որպեսզի նոր արդյունքներով արգասավորեն ազգային եկեղեցական մեր անդաստանը: Հովվական նվիրյալ ծառայությանը որպես գնահատանք՝ ցանկանում ենք մեր սիրեցյալ հայր Երեմիայի կուրծքը զարդարել վարդապետական լանջախաչով: Ուրախությունն ունենք նաեւ այս պայծառ եկեղեցուն, ձեզ՝ սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, ընծայաբերելու սրբապատկեր, որպեսզի սրբոց բարեխոսությունը անպակաս լինի ձեր կյանքից:

Մեր աղոթքն է, որ Տերն օրհնի հյուրընկալ այս երկիրը եւ միշտ խաղաղության ու բարօրության մեջ պահի-պահպանի նրա աստվածասեր ժողովրդին: Հայցում ենք Տիրոջից, որ պարգեւի ձեզ կյանքի երջանիկ ու երկար օրեր եւ արդյունավորի ձեր եկեղեցաշեն եւ ազգանվեր ծրագրերը, արդար ու բարի բոլոր գործերը:

Մնացեք խաղաղությամբ, Տիրոջ սիրո մեջ եւ Տիրոջ օրհնության ներքո. ամեն:

* * *

Այցի առիթով Հայոց Հայրապետը Սուրբ Երրորդություն եկեղեցուն ընծայեց Տիրոջ խաչելության պատկեր, նաեւ Սուրբ Էջմիածնից բերված խաչեր ընծայեց ներկա հավատացելոց: Աջահամբույրից հետո եկեղեցու «Բաթմանյան» սրահում տեղի ունեցավ հանդիպում եւ հյուրասիրություն

համայնքի անդամների հետ, որն սկսվեց եկեղեցու հոգեւոր հովիվ Հայր Երեմիա վարդապետի ծուխի հավատացյալների անունից Վեհափառին ուղղված բարիգալստյան խոսքով։ Հանդիպման ընթացքում ներկաները հնարավորություն ունեցան ջերմ մթնոլորտում զրուցելու Վեհափառ Հայրապետի հետ, ստանալու իրենց կյանքը հուզող տարբեր հարցերի շուրջ Նորին Սրբության թելադրություններն ու հորդորները։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ առանձին հանդիպում ունեցավ եկեղեցական վարչության անդամների հետ, ծանոթացավ համայնքային ծրագրերին՝ իր օրհնությունն եւ գնահատանքը բերելով եկեղեցական կառույցներում ընդգրկված աշխարհական անձանց նվիրյալ եւ անսակարկ ծառայության համար։

ՓԵՏՐՎԱՐԻ 3. *Փետրվարի 3-ին ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սուրբ Պատարագ մատուցվեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի Սիդնեյ քաղաքի Սուրբ Հարություն առաջնորդանիստ եկեղեցում։*

Պատարագի արարողությանը ներկա էին Նյու Սաութ Ուելսի նահանգապետուհի Գլադիս Բերեջիկլյանը, Խորհրդարանի անդամ եւ նախարար Փոլ Ֆլեչըրը, Քրիստոնյա Դեմոկրատ կուսակցության հիմնադիր եւ նախագահ Ֆրեդ Նայլը, Հայր Թովմաս Վարկիզը, Նյու Սաութ Ուելս էկումենիկ խորհրդի նախագահ Ռեյ Վիլիըմսը, Ավստրալիայի էկումենիկ խորհրդի ընդհանուր քարտուղար Էլիզաբեթ Սթոնը, Ղպտի Եկեղեցու առաջնորդ Դանիել եպիսկոպոսը, «Էմմանուել» սինագոգի խորհրդի նախագահ Կուեն Հարիսը, թեմական ու ծխական խորհուրդների անդամներ, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ բարերարներ։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը թափորով ամպհովանիի ներքո առաջնորդվեց դեպի տաճար, ուր մասնակցությամբ բարեպաշտ հայորդիների եւ բազում հյուրերի մատուցեց Սուրբ եւ Անմահ Պատարագ։ Սուրբ Պատարագին որպես առընթերականեր սպասավորում էին Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն եպս. Նաջարյանը։ Արարողության ընթացքում Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու պատգամը բերեց հավաքված ժողովրդին։

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՍԻԴՆԵՅԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(3 փետրվար, 2019 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Հաւատով ճանաչել զնա եւ
զզօրութիւն յարութեան Նորա»
(Փիլիպ. Գ. 10):

Սիրելի՛ հավատացյալ, բարեպաշտ ժողովուրդ, Հայրապետիս համար մեծ մխիթարություն է ողջունել ձեզ այսօր, այս սուրբ եկեղեցու կամարների ներքո: Հովվապետական Մեր այցերի ընթացքին հավատավոր մեր ժողովրդի հետ հանդիպումներն են առավել ամրացնում Մեր այն համոզումը, որ Քրիստոսի Սուրբ Եկեղեցուն ամուր կապված հայ ժողովուրդը, աշխարհի ամենահեռավոր անկյուններում անգամ, պահելու է իր ազգային, քրիստոնեական ինքնությունը: Փառք ենք մատուցում Տիրոջը, որ արժանացնում է Մեզ շնորհին ձեզ հետ միասին գոհության աղոթք բարձրացնելու երկինք՝ Սուրբ Պողոս առաքյալի խոսքերը կրկնելով. «Ողջույն տվեք միմյանց սուրբ համբույրով» (Ա. Կորնթ. ԺԶ. 20):

Պողոս առաքյալն ինքը, իբրեւ ընտրյալ անոթ եւ Տիրոջ խոսքի անվեհեր քարոզիչ, շրջում էր քրիստոնեական նորաստեղծ համայնքներում՝ այդպիսով, սուրբ ողջույնի միջոցով իրար կապելով միմյանցից հազարավոր մղոններ հեռու գտնվող քրիստոնյա եղբայրներին ու քույրերին: Այսօր Մենք էլ, իբրեւ Սբ. Գրիգոր Լուսավորչի աթոռի գահակալ, եկել ենք ձեզ բերելու սուրբ ողջույնները համայն հայության նվիրական կենտրոն Սուրբ Էջմիածնից եւ Հայրապետական մեր պատգամը փոխանցելու այստեղ, այս նվիրական Սուրբ տաճարի կամարների ներքո խմբված Մեր սիրելի՛ հավատավոր զավակներին:

Պատմության բերած դժվարին փորձությունների ու տառապանքների պատճառով աշխարհասփյուռ դարձած հայ ժողովուրդը խաչելության իր երկար ճանապարհներն ավարտել է արության արեւածագերով՝ իբրեւ լույսի ու զորության աղբյուր մշտապես ճանաչելով մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, ում հարության զորությամբ կրկին ուժ է առել ինքնակազմակերպվելու եւ պահպանելու ազգային քրիստոնեական իր դիմագիծը: Որտեղ էլ ապրել է քրիստոնյա հայորդին, աշխարհի ամենահեռավոր ու մոռացված ծագերում անգամ, նրա հոգին ծաղկել է Արարատի զավակը լինելու հայրենասիրական

ոգով եւ հաղթանակած Փրկչի հարության զորությամբ։ Ուխտել է՝ մնալ մյուռոնադրոշմ, հավատարիմ զավակը Սուրբ Էջմիածնի, որով անշեղորեն կրել է կնիքը հարության եւ շնորհը Քրիստոսին որդեգրության, ըստ առաքյալի խոսքի՝ հավատով ճանաչում ենք Նրան եւ Նրա հարության զորությունը (հմմտ. Փիլիպ. Գ. 10)։

Սիրելինե՛ր, Մենք անչափ ուրախ ենք եւ մխիթարված, որ Ավստրալիո հայ համայնքը նոր զարթոնք է ապրում, զորացնում հավատի իր կյանքը՝ համախմբված Հայոց Եկեղեցու շուրջ, վերարժեւորելով մեր պատմության փառավոր հիշատակները եւ նախնյաց ժառանգությունը։ Դուք եք այսօր հայ ժողովրդի դեսպանները հեռավոր Ավստրալիայում, ձեզանով նաեւ այստեղ գիտեն հայոց քրիստոնյա, հավատավոր հոգին, Հայ Եկեղեցին, մեր ժողովրդի հնամյա ու հարուստ ժառանգությունն ու մշակույթը, խաղաղության, ազատության, արարելու սերը մեր ժողովրդի։

Պատասխանատու ենք մեր ժամանակի համար, եւ մեր գործերով է, որ այն պիտի առնանգրվի իբրեւ վերականգնումի ժամանակաշրջան՝ լցված Քրիստոսով ազատ հոգու եւ մտածողության, քրիստոնեական մեր նկարագրի ամրացման ու վերարժեւորման ոգով։ Մեր նոր ձեռքբերումներով ու հաղթանակներով է, որ պիտի առաջ ընթանա ժամանակը հայրենիքի զորացման ժամանակը՝ սփյուռքի գաղթօջախներում ազգային կյանքի վերազարթոնքի, մեր մշակույթի, գիտության ու կրթության զարգացման եւ ծաղկունքի։ Քրիստոս է մեր ճանապարհը, Նրան են ճանաչել մեր հայրերը, եւ Նրան ենք ճանաչում մենք՝ անվարան հավատալով Նրա հարության կենսագործող ու վերանորոգող զորությանը։

Հայրապետական մեր հորդորն ու պատգամն է, որ շարունակեք ապրել նույն ջերմեռանդ հավատով եւ ազգային նախաձնախնդրությամբ՝ հավատի ու աստվածահաճո գործերի համադրմամբ շենացնելով Հայ Եկեղեցու շուրջ համախմբված ձեր համայնքը։ Հիշե՛ք ու ձեր հայրենասեր հոգիներում պահե՛ք Տերունահիմն Սուրբ Էջմիածինը, որի Իջման Սուրբ Սեղանի առջեւ երկրպագել եւ Աստծուն են փառաբանել մեր պատմության բերրի անդաստանի անխոնջ մշակներն ու սպասավորները։ Մայր Տաճարի վեհափառ գմբեթները, որոնք դիմակայել են պատմության աշխարհավեր փորձություններին ու վայրագություններին, ժամանակների մարտահրավերներին, այսօր հպարտորեն կանգուն են՝ իբրեւ մարմնացումը հայ քրիստոնեական ոգու եւ ինքնության։ Հանապազ մտաբերե՛ք, սիրելինե՛ր, Հայաստանի սրբազան լեռները, զուլալ գետերը, մեր կապուտակ ու ջինջ Սեւանը, Արարատի վեհապանծ բարձունքները, մեր ազգային պայքարի ու հերոսացումի վկա Սարդարապատը եւ

Արցախը, Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը հավերժացնող երկնամուխ Ծիծեռնակաբերդը: Ձեր ազգային կյանքի մեջ միշտ վա՛ռ պահեք հին մարմնի մեջ նոր ոգով վեր հառնող, հայ քրիստոնեական քաղաքակրթությունը մարմնավորող մեր փառապանծ վանքերն ու եկեղեցիները, որտեղ ամեն մի քար, հողի ամեն մի պատառիկ սրբագործված են մեր փառավոր նախնյաց մշտամրմունջ աղոթքով ու հայրենանվեր սիրով, նահատակության արյամբ ու պայքարի քրտինքով:

Հաղորդակի՛ց դարձեք, ձեր գործերով ու ձեր նվիրական զգացումներով, նորակերտ Հայաստանին, հայրենիքում իրենց հանապազ տքնությամբ արարող, հայրենյաց սահմաններն անսասան պահող ձեր եղբայրներին ու քույրերին, որոնք վերստին մեր ազգային, քրիստոնեական արժեքներին իրենց նվիրվածությունն ու հավատարմությունը ամբողջ աշխարհին ի ցույց դրեցին՝ հաստատելով, որ ամենաճգնաժամային պահերին իսկ հայ ժողովուրդը գիտե Քրիստոսի սուրբ պատվիրանների համաձայն առաջնորդվել եւ իր հայրենիքն անշեղորեն տանել դեպի նոր ու լուսավոր ապագա

Նոր արշալույս է բացվում ազգային մեր կյանքում՝ նոր հույսերով, ապահով, բարօր ու երջանիկ կյանք կերտելու վճռական տրամադրությամբ եւ կամքով: Հայրենիքից ձեզ եկող լուրերն այսօր զգեստավորված են ոգեշնչումի ու քաջալերության թեւերով, եւ մենք ամենքս պետք է մեր կարելին անենք՝ միավորելու մեր ուժերը եւ զորացնելու մեր ազգային-քրիստոնեական հասարակությունը, կերտելու առաջընթացի ու հանդուրժողականության, սիրո եւ եղբայրության տիպար եւ այդ ոգով ու նկարագրով կերտելու ամեն հայի հուսալի ու շեն բնօրրան հայրենիքը: Արդարեւ, հազարամյակների մեր պատմության օրինակն ու հարուստ ժառանգությունը, երկիր շենացնելու եւ մշակույթ զարգացնելու փորձը, ազատության հանդեպ հոգու եւ մտքի աննահանջ ձգտումը — այս ամենն ունենք ավելիով, որովհետեւ կանգնած ենք մեր նախնյաց հզոր ու անպարտելի ժառանգության ամուր պատվանդանի վրա, եւ դրանով մեր աչքերի առաջ բացվում են լուսավոր հորիզոնները մեր հայրենիքի: Թող Աստված զորացնի մեր ժողովրդին՝ միասնականությամբ հասնելու իրագործմանը մեր արդար իղձերի, մեր պետության առավել հզորության եւ համայն հայության բարօրության ու պայծառության, ըստ առաքյալի խոսքի՝ «ամեն ինչի կարող եմ Քրիստոսի շնորհիվ, ով ինձ զորացրեց» (Փիլ. Դ. 13):

Սիրելինե՛ր, սրբազան Պատարագի այս խորախորհուրդ արարողության ընթացքին ուրախություն է Մեզ համար ողջունելու Նյու Սաութ Ուելս նահանգի նահանգապետուհի մեծազնիվ տիկին Գլադիս Բերեջիկլյանին, մեր քույր եկեղեցիների ներկայացուցիչներին, որոնց ներկայությունը վկայություն է

հայ համայնքի, մեր սուրբ Եկեղեցու հանդեպ բարեկամության ու եղբայրական ջերմ զգացումների։ Ուրախ ենք այստեղ ողջունելու նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեծ բարերար՝ տեր եւ տիկին Հայկ եւ Էլզա Տիտիզյաններին։ Մաղթում ենք, որ Տերն օրհնի Ավստրալիո իշխանություններին՝ բարի իրագործումներով հավելելու շենությունն ու պայծառությունը այս օրհնյալ երկրի։ Հայցում ենք Աստծու զորակցությունը ի Քրիստոս Մեր հոգեւոր եղբայրներին՝ տերունապատվեր բարի ծառայության, Տիրոջ Ավետարանը վկայելու մեծ առաքելության մեջ։

Աղոթքով առ Աստված հայցում ենք Տիրոջ օրհնությունն ու զորակցությունը Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանին, հոգեւոր դասին, թեմական եւ ծխական խորհուրդների պատվարժան անդամներին, ձեզ բոլորիդ, սիրելի՛ ավստրալահայ զավակներ Մեր։ Ամուր պահեք ձեր հավատը, հայրենապաշտ ու եկեղեցասեր ոգին։ Մնացեք խաղաղությամբ եւ մնացեք սիրով։ Քրիստոնեական ամենահաղթ սերը շաղախը թող լինի ձեր կյանքի ու գործերի, որով կարողանաք միշտ երախտագիտության եւ գոհության ոգով փառաբանել Աստծուն։ Աղոթենք ու հայցենք Տիրոջ խաղաղությունը համայն աշխարհին, բարեկամ Ավստրալիո եւ հայրենի մեր երկրին։ Թող միշտ զորանան սերն ու խաղաղությունը եւ բարի համագործակցությունը ազգաց, ժողովուրդների եւ պետությանց միջեւ, այսօր եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն։

Սիրելինե՛ր, այժմ գոհունակությունը ունենք որպես գնահատանք իր նվիրյալ ծառայության եւ որպես Հայրական սիրո արտահայտություն՝ եպիսկոպոսական պանակեով զարդարելու կուրծքը Ավստրալիո եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանին, մաղթելով բաջառողջություն, երկար տարիների արդյունավոր ծառայություն ի փառս մեր սուրբ Եկեղեցու։

Ուրախություն է Մեզ համար գնահատանքի արժանացնել նաեւ նվիրյալ ծառայությունը Սիդնեյի Սուրբ Հարություն եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Ավետիս քահանայի, ով, տեսանք այս օրերին, մեծապես վայելում է սերը եւ հարգանքը մեր հավատավոր զավակների։ Սիրելի՛ Տեր հոր կուրծքը ցանկանում ենք զարդարել քահանայական լանջախաչով՝ մաղթելով, որ նույն նվիրումով ու սիրով իր անսակարկ ծառայությունը բերի հավատավոր մեր ժողովրդին։

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ, Հովվապետական Մեր այս այցի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերել ենք մի սրբապատկեր, որպեսզի դում ձեր հայցն ու աղոթքը բարձրացնեք առ Աստված նորածին Մանկան՝ մեր Տեր Հիսուս Փրկչի առջեւ։ Հայցեք Երկնավորից խաղաղություն աշխարհին,

խաղաղություն՝ մեր հայրենի երկրին, բարօրություն՝ աշխարհասփյուռ մեր ժողովրդին, ամուր հույս ու հավատք, որպեսզի շարունակի լավատեսությամբ ու աննվազ կամքով կառուցել իր երազների երկիրը՝ հզոր, ապահով հայրենիքը եւ իրագործել ազգային իր իղձերը։

Աստված թող օրհնի ձեզ ամենքդ եւ պահի պահպանի Իր շնորհի եւ սիրո ներքո. այժմ եւ հավիտյան. ամեն։

* * *

Սուրբ Պատարագի ընթացքում Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Հայկազուն Սրբազանի կողմից ընթերցվեց Հայրապետական Սրբատառ կոնդակը, որով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշան շնորհվեց տիկին Գլադիս Բերեջիկլյանին ազգօգուտ եւ եկեղեցանվեր իր ծառայության համար։

Հայրապետական այցելության առիթով եկեղեցուն ընծայվեց Տիրոջ Սուրբ Ծննդյան պատկեր՝ մաղթանքով, որ նրա առջեւ վերառաքվող աղոթքներով համայնքը շարունակի հավատի մեջ զորանալ, պայծառ պահել իր հոգեւոր ու ազգային կյանքը։

Ս. Պատարագից հետո հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի նորակառույց առաջնորդարանի բացման արարողությունը։

Սիդնեյի Սուրբ Հարություն առաջնորդանիստ եկեղեցում մատուցված Սուրբ Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Հրաշափառով» ուղղվեց դեպի առաջնորդարանի նորակառույց շենքը, որտեղ իրեն սպասում էին պետական այրեր, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ, Հայ Եկեղեցու բարերարներ եւ բազում այլ հավատավոր հայորդիներ։

Վեհափառ Հայրապետը Հայկազուն Սրբազանի եւ Թեմական խորհրդի ատենապետ տիար Սարգիս Տեր-Պետրոսյանի հետ միասին կատարեց առաջնորդարանի հուշաքարի բացումը եւ հատեց մուտքի ժապավենը՝ ազդարարելով առաջնորդարանի պաշտոնական բացումը։

Տոնական այս առիթով Նորին Սրբությունն իր օրհնության եւ գնահատանքի խոսքն ուղղեց ներկաներին։

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(3 փետրվարի, 2019 թ.)

Սիրելի՛ Սրբազան,

Գերաշնորհ, հոգեշնորհ, արժանապատիվ հայրեր,

Պատվարժան պետական պաշտոնյաներ,

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ մեր Եկեղեցու,

Անհուն ուրախությամբ եւ հոգու բերկրանքով ողջունում ենք ձեզ: Տոնական օր է բոլորիս համար: Իր դռներն է բացում ավստրալահայ համայնքի նորակառույց Առաջնորդարանը, որպեսզի ծառայի այս օրհնյալ երկրում մեր ժողովրդի հոգեւոր եւ ազգային կյանքի պայծառությանը:

Նորաշեն, մեծ ու գեղեցիկ այս շենքի կառուցումը մի նոր վկայություն է ավստրալաբնակ մեր ժողովրդի հավատքի եւ եկեղեցասիրության եւ ազգային կյանքի հանդեպ նախանձախնդրության: Այդ ոգին է շենացրել այստեղ հայկական կյանքը: Այդ ոգին միավորել է ձեր ծնողներին ու պապերին եկեղեցիներ կառուցելու, դպրոց ունենալու, ազգային կառույցներ ստեղծելու՝ պահպանելու համար ազգային ինքնությունը եւ հավատքի կյանքը, որն ունի Քրիստոսի շնորհը հավիտենության:

Տիրոջ օրհնությամբ նոր Առաջնորդարանը ծառայելու է Ավստրալիայում մեր Եկեղեցու առաքելության արդյունավորմանը, հայ համայնքի զորացմանը, որպես ազգի տուն՝ համախմբելով այս մեծ երկրում ապրող մեր ժողովրդի զավակներին: Բոլորիս տեսիլքն է, որ այս նորաշուք հարկի ներքո հատկապես երիտասարդ հայորդիները առնչվեն իրենց արմատներին եւ առավել ներգրավվեն հոգեւոր եւ ազգային կյանքում: Առաջնորդարանը՝ ինչպես ազգային կյանքի ամեն ձեռքբերում, նաեւ բարի գործերի նախանձախնդրության օրինակն է փոխանցելու հաջորդ սերունդներին՝ շարունակելու ավստրալահայ համայնքի հավատքի կյանքը, բարեպաշտ ընթացքն ու ավանդները:

Ձեր բարեպաշտությունը, սիրելինե՛ր, նաեւ հիմքն է այս մեծ ու բազմազգ երկրում ձեր հաջողությունների եւ ձեր հանդեպ հարգանքի ու վստահության: Եւ Մենք անսահման ուրախ ենք այս հանդիսությանը մասնակից տեսնել իշխանության ներկայացուցիչներին, քույր Եկեղեցիների առաջնորդներին եւ հավատակից մեր եղբայրներին ու քույրերին, որոնց Մեր օրհնությունը բերելով, փոխանցում ենք երախտիքի Մեր խոսքը այն բարի վերաբերմունքի համար, որը մեր ժողովրդի զավակները վայելում են Ավստրալիայում:

Մեր գնահատանքը եւ օրհնությունն ենք բերում այս նորաշուք Առաջնորդարանի բարերարներ Տեր եւ Տիկին Լորիս եւ Սոնա Խանջյաններին եւ իրենց ավանդը Առաջնորդարանի կառուցմանը բերած մեր Եկեղեցու նվիրյալ զավակներին՝ Տիրոջից հայցելով նրանց բաջառողջություն, արեւշատ կյանք եւ ազգաշահ նոր ձեռնարկներ: Այսօր սրտի գոհունակությամբ Տեր եւ Տիկին Խանջյաններին հանձնեցինք «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն պարգեւը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: Մենք վստահ ենք, որ այս պարգեւը խրախույս պիտի լինի համայնքի մեր մյուս անդամների համար՝ իրենց նվիրյալ ծառայությունը եւ իրենց աշխատանքի արդար վաստակը միախառնելու համայնքի ազգային կյանքին:

Առաջնորդարանի բացման այս հիշարժան օրը Հայրապետական սիրով Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ, սիրելի՛ Սրբազան, եւ եւ այս առիթով շնորհում ենք Ձեզ Արքության պատիվ: Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ աջակից բարեջան հոգեւորականներին, որ անխոնջ խնամում եւ հսկում են մեր ժողովրդի հոգեւոր կյանքը: Մեր օրհնությունը՝ եկեղեցական վարչականներին եւ Ավստրալիայում ապրող համայն հավատավոր մեր ժողովրդին:

Սիրելինե՛ր, Մեր պատգամն ենք բերում հավատքի անսասանության, միմյանց հանդեպ սիրո եւ միասնականության, որով պիտի շարունակեք շենացնել ձեր կյանքը, իրագործել ձեր ազգաշահ գործերը: Առ Աստված Մեր հայցն ու մաղթանքն է, որ այս Առաջնորդարանը արդյունավորությամբ ծառայի ավստրալահայ մեր ժողովրդի հոգեւոր եւ ազգային զարթոնքին՝ իրենց կյանքում վայելելու Աստծու օրհնությունն ու շնորհները:

Այս առիթով Մենք ուրախությունն ունենք նաեւ սրբանկար ընծայաբերելու Առաջնորդարանին: Աստվածամոր պատկերն է: Հայաստանի անվանի նկարիչներից Անատոլի Ավետյանի գործն է: Մեր աղոթքն է, որ Աստվածամոր բարեխոսությունը միշտ լինի ավստրալահայ մեր զավակների հետ: Եւ նրա հովանին պահի ու պաշտպանի մեր զավակներին մշտական օրհնության ներքո Բարձրյալ մեր Տիրոջ:

Աղոթում ենք աշխարհի խաղաղության, Ավստրալիայի եւ մեր մայր հայրենիքի խաղաղ ու բարօր կյանքի համար: Թող Տերը պահպանի համայն մեր ժողովրդին անփոռնանք ու անվտանգ, մեկ ու միասնական՝ մեր Սուրբ Եկեղեցիով ու Սուրբ Էջմիածնով եւ նվիրական մեր հայրենիքով:

Թող Տիրոջ ողորմությունն ու շնորհները լինեն մեզ հետ եւ բոլորի. այսօր եւ հավիտյան. ամեն:

* * *

Նույն օրվա երեկոյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ավստրալիա կատարած հովվապետական այցի շրջանակներում Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի թեմական խորհրդի կողմից տրվեց պաշտոնական ճաշկերույթ ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի։ Ճաշկերույթին ներկա էին հայ համայնքի երեք հարյուրից ավելի անդամներ, բարերարներ, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ, թեմի հոգեւոր սպասավորներ, Քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ։ Հանդիսավարն էր թեմական խորհրդի փոխատենապետ դոկտ. Ստեփան Գրքաշարյանը։

Երեկոյին գեղարվեստական կատարումներով հանդես եկան համայնքի պարախմբերը, նվագախմբերը, երգչախմբերն ու տաղանդավոր ասմունքողները՝ մեծ ոգեւորություն ու ցնծություն պարգեւելով ներկաներին։

Հանդիսության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրհնության գրեր շնորհեց նորակառույց առաջնորդարանի մի շարք բարերարների, այդ թվում նաեւ տիար Արմեն Բաղդասարյանին՝ եկեղեցուն եւ առաջնորդարանին մատուցած իր երկարամյա ծառայության համար։ Երեկույթն ամփոփվեց Նորին Սրբություն Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի օրհնության պատգամով։

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԱՌԻԹՈՎ ՍԻԴՆԵՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(3 փետրվարի, 2019 թ.)

Սիրելի՛ Սրբազան,

Ի Քրիստոս հոգեւոր եղբայրներ,

Պատվարժան պետական այրեր,

Սիրելի՛ հավատավոր զավակներ մեր եկեղեցու,

Բարեպատեհ առիթն ունենք սեղանի շուրջ համախմբված՝ վերստին միմյանց հետ կիսելու մեր հանդիպման ուրախությունը։ Գոհություն ենք մատուցում Աստծուն, որ քաջալերությամբ լեցուն, պայծառ պահեր ապրեցինք ձեզ հետ միասին։ Մեր աղոթքները միավորեցինք աշխարհի խաղաղության,

Քրիստոսի Սուրբ Եկեղեցու անսասանության եւ մարդկության կյանքում Տիրոջ շնորհների առատության համար։ Ջգացինք մեր ժողովրդի սերը Առաքելական մեր Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու մայր հայրենիքի հանդեպ եւ ուրախացանք հատկապես՝ Հայաստանից այսքան հեռու մեր երեխաների շուրթերից լսելով մայրենի բարբառը։

Հայրապետիս համար հոգու խնդություն է, սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր, տեսնել ձեր եկեղեցանվեր ու ազգաշահ գործերը, որոնք շենացնում են համայնքային կյանքը, ինչպես նաեւ՝ ունկնդիր լինել Ավստրալիայում ապրող մեր ժողովրդի հանդեպ հարգանքի ու գնահատանքի խոսքերին, որոնց արժանանում եք այս օրհնյալ երկրում ձեր հավատավոր կյանքով եւ ձեր գործունեությամբ ու վաստակով։ Արդարեւ, հայկական համայնքների մեջ Ավստրալիայի համայնքը ամենաերիտասարդներից է, սակայն ունի ամուր արմատներ եւ ավանդներ, որոնք ձեր՝ եկեղեցական, ազգային մարմինների, բարեբարների նախանձախնդրությամբ ու բարի հավատքով շարունակվում են ու զորանում։ Այստեղ նույնպես հեշտ չի սկսվել ձեր հայրերի ու պապերի կյանքը, հեշտ չի ստեղծվել հայկական համայնքը, սակայն առաքյալի խոսքի համաձայն՝ տկարությամբ սերմանվածը հառնել է զորությամբ (Ա. Կորնթ. ԺԵ. 43)։

Մեր ժողովրդի հաջողությունները պայմանավորվել են նաեւ Ավստրալիայի իշխանությունների բարեհաճ վերաբերմունքով։ Մենք ուրախ ենք, որ այստեղ ներկա պետական այրերին կարող ենք կրկին ուղղել երախտագիտության Մեր խոսքը՝ մեր ժողովրդի հանդեպ դրսեւորած վերաբերմունքի եւ աջակցության համար։ Մեր գոհունակությունն ենք հայտնում նաեւ Ավստրալիայում առաքելություն իրականացնող քույր Եկեղեցիներին՝ եղբայրական սիրո եւ գործակցության համար, որի դրսեւորումն էր նաեւ անցած տարի Ավստրալիայի քրիստոնեական Եկեղեցիների պատվիրակության այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին։

Մայր Աթոռը, սիրելի՛ զավակներ Մեր, առ Տերն ապավինությամբ իրականացնում է իր առաքելությունը՝ ի սեր հայրենիքում եւ սփյուռքում մեր հոգեւոր եւ ազգային կյանքի զորացման։ Առաջնային են մնում եկեղեցականների պատրաստությունը, նոր եկեղեցիների կառուցումն եւ հնագույն մեր սրբատեղիների նորոգումը։ Հոգեւոր խոսքը մատուցվում է նաեւ հեռուստաեթերով, ռադիոհաղորդումներով, գրականության հրատարակմամբ։ Քարոզչություն եւ հոգեւոր սպասավորություն է իրականացվում նաեւ մեր բանակում, սոցիալական կառույցներում, իրագործվում են կրթական նախաձեռնություններ, աջակցության ծրագրեր՝ օգնելու կարիքավորներին, ծնողազուրկ երեխաներին։

Ինչպես գիտեմ, այս տարի Մենք հոչակեցինք ընտանիքի տարի եւ այդ շրջագծում նախաձեռնեցինք կարիքավոր ընտանիքներին բնակարաններով ապահովելու աշխատանք: Այս առիթով Մենք կուզենք Մեր գնահատանքը բերել Սիդնեյի մեր հավատավոր զավակներին եւ եկեղեցական վարչությանը, ովքեր հանձն առան օժանդակել չորս ընտանիքների՝ ունենալու իրենց բնակարանները:

Ձեռքբերումները, որ իրագործվում են նաեւ սփյուռքի հայորդյաց սատարումով եւ աջակցությամբ, առավել լավատեսական են դարձնում Մայր Աթոռի գործունեությունը: Սփյուռքի թեմերում մեր առջեւ ծառացած կարեւոր հրամայականներ են ծուխերի ամրապնդումը, մեր Եկեղեցու կանոնական հիմքերի վրա եկեղեցական կյանքի կազմակերպումը, տարբեր պատճառներով տեղաշարժերի արդյունքում ծնունդ առնող ազգապահպան խնդիրների դիմագրավումը, մեր ժողովրդի զավակների ներգրավումը եկեղեցական համայնքային կյանքում:

Այսօր, սիրելինե՛ր, հայրենիքում եւ սփյուռքում մեր ժողովուրդն ապրում է բարի սպասումներով, որ կապված են Հայաստանում ընթացող բարեփոխումների, մեր երկրի զարգացման ու առաջընթացի հույսերի հետ: Հայաստանի զարգացումը կենսական կարեւորություն ունի շրջափակման մեջ ապրող հայրենաբնակ մեր ժողովրդի համար, նաեւ Արցախի ապահովության, մեր բանակի հզորության, մեր սահմանների պաշտպանության համար: Հզոր հայրենիքը ազգային մեր կյանքի ապավենն է, մեր իղձերի իրագործման գրավականը:

Մեր հորդորն է ձեզ, սիրելի՛ բարեպաշտ զավակներ, որ զորանամ հավատքով եւ ձեր զավակներին կրթեք հավատքով, սնուցեք ազգի հանդեպ սիրով, որն ունեք ձեր հոգում եւ վկայում եք բազում գործերով: Այս առումով պատասխանատվությունը մեծ է սփյուռքում, որտեղ կարեւոր մտահոգություն է դառնում հատկապես նոր սերնդի ազգային ինքնության պահպանումը, որը առավելաբար է կրում միջավայրի ազդեցությունը: Ձեր երեխաներին պիտի ուսուցանեք մայրենի լեզուն, ազգային ավանդները, կրթեք եկեղեցասիրությամբ, մայր հայրենիքի սիրով, որպեսզի հետո նույն նախանձախնդրությամբ մասնակցեն եկեղեցական, համայնքային ու ազգային մեր կյանքին: Դուք, ձեր որդիները, որտեղ էլ ապրեք՝ մնացեք հավատարիմ մեր սրբազան արժեքներին, որդիական ջերմ սիրով ու հավատարմությամբ լեցուն հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Նրա լույսը եղեք միշտ եւ զորացեք՝ ձեր հայացքը պահելով դեպի Սուրբ Էջմիածին եւ մայր հայրենիք, որոնցով միավորված մնալով մեր ժողովուրդը պիտի տեսնի իր ջանքերի արդյունավորումը, իր նպատակների իրագործումը, իր բարի գալիքը:

Վերստին գոհունակ սրտով Մեր գնահատանքն ենք բերում Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց Թեմի բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանին, Սիդնեյի եկեղեցու հոգեւոր սպասավորներին, Թեմական խորհրդի, եկեղեցական վարչության բարեջան անդամներին, մեր եկեղեցու բարեւար զավակներին, ձեզ բոլորիդ, սիրելի՛ հայորդիներ, որ պահպանում եւ զորացնում եք համայնքային կյանքը: Թող Տերն օրհնի ձեզ եւ ձեր ընտանիքները:

Մեր գնահատանքն ենք հայտնում Մեր այցը այնքան խնամքով կազմակերպած հանձնախմբերին եւ անձանց, իրենց ազնիվ ներդրումի համար: Մեր գնահատանքը այս հյուրասիրության բարեւարին եւ իր ազնիվ տիկնոջը, որին եւ դուք բոլորդ ճանաչում եք: Մենք փառք ենք տալիս Աստծուն, որ այսպիսի ազնվահոգի հայորդիներ ունենք, ովքեր իրենց աշխատանքի վաստակը միախառնում են հայ կյանքին եւ նոր հնարավորություններ ստեղծում ազգային մեր կյանքի առաջընթացի համար: Մեր գնահատանքն ենք բերում արվեստի մեր սիրելի՛ մշակներին, որ գեղեցկացրեցին այս երեկոն իրենց բարձր կատարողական մատուցումներով: Թող Տերը առատացնի ձեր կյանքում շնորհները, սիրելինե՛ր:

Աղոթում ենք, որ Տերը իր շնորհի ներքո պահի ազգս հայոց եւ օրհնի մեր ժողովրդի ջանքերը՝ հանուն մեր Սուրբ Եկեղեցու, մեր նվիրական հայրենիքի, մեր ներկայի ու գալիքի: Թող Տերը օրհնի Ավստրալիան եւ պահպանի բարօրության ու առաջընթացի մեջ:

ՓԵՏՐՎԱՐԻ 4. *Փետրվարի 4-ին Ավստրալիայի Նյու Սաութ Ուելսի նահանգային խորհրդարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ավստրալիա կատարած հովվապետական այցի առիթով։*

Ամենայն Հայոց Կաթողիկոսին խորհրդարանում դիմավորեց նահանգապետուհի Գլադիս Բերեջիկլյանը։

Ընդունելության ընթացքում Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով ողջունեցին տիկին նահանգապետուհին եւ նահանգային խորհրդարանի պետարանի նախագահ տիար Ջոն Աջական։

Իր ողջույնի խոսքի մեջ նահանգապետուհին նշեց, որ Վեհափառ Հայրապետին ընդունում է երկու հանգամանքով, որպես պետական բարձրաստիճան պատասխանատու՝ նահանգապետուհի, եւ որպես հպարտ ու հարազատ զավակ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու։

Այնուհետեւ ընդունելության մասնակիցներին, նաեւ տարբեր Եկեղեցիների ու հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներին սրտագին բարեմաղթանքներով ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ շնորհակալություն հայտնելով հանդիպման բարեպատեհ հնարավորության համար։

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒՀՈՒ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՀԱՇԻՆ

(4 փետրվարի, 2019 թ.)

Նյու Սաութ Ուելս նահանգի վարչապետ մեծազնիվ տիկին Գլադիս Բերեջիկլյան,

Հարգարժան պետական այրեր,

Պատվարժան հոգեւոր հայրեր,

Սիրելի՛ ներկաներ,

Սրտագին բարեմաղթանքներով ողջունում ենք ձեզ եւ Մեր շնորհակալությունը հայտնում այս հանդիպման բարեպատեհ հնարավորության եւ հաշի սեղանի շուրջ ջերմ մթնոլորտում համախմբման համար։ Մեծ գոհունակություն է Հայոց Հայրապետիս համար այս մտերմիկ միջավայրում եւս հանդիպելու Ձեզ, մեծազնիվ տիկին Գլադիս, հանդիպելու հարգարժան քաղաքական գործիչներիդ եւ բարձրաստիճան հոգեւորականներիդ։ Ձեր միասնական ներկայությունը այս հանդիպմանը գեղեցիկ վկայություն է հայ ժողովրդի, Հայ Եկեղեցու հանդեպ հարգանքի եւ բարեկամության։

Աստծու կամոք Մենք վերստին առիթն ունեցանք այցելելու Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի Մեր սիրելի՛ ժողովրդին՝ բերելու նրանց Մայր հայրենիքի, Սուրբ Էջմիածնի լույսն ու օրհնությունը, հայրական Մեր սերը եւ քաջալերանքը՝ հոգեւոր միասնության, քրիստոնեական արժեքներին հավատարմության մեջ շարունակելու իրենց ազգային-եկեղեցական կյանքի առաջընթացը։

Մենք եկել ենք նաեւ Հայ Եկեղեցու եւ Մեր ժողովրդի երախտագիտությունը հայտնելու Ավստրալիո կառավարությանը, նահանգային, քաղաքային բարեսեր իշխանություններին, որ բարյացակամությամբ աջակցում են հայ համայնքին այս գեղատեսիլ մայրցամաքում կազմակերպելու ու զորացնելու հայոց ազգային-եկեղեցական կյանքը։ Ավստրալաբնակ հայորդիները,

ի գնահատումն իրենց հանդեպ դրսեւորված բարեկամական ու սիրառատ վերաբերմունքի, իրենց ձեռքբերումներն ու հաջողությունները ծառայեցնում են հյուրընկալ այս պետության բարգավաճմանը, հասարակական կյանքի զարգացմանը, մշակույթին ու գիտությանը: Այսպիսի հիանալի օրինակ է Նյու Սաութ Ուելս նահանգի վարչապետի բարձր պաշտոնը ստանձնած մեծազնիվ տիկին Գլադիս Բերեջիկլյանի գովարժան եւ արդյունավոր գործունեությունը, ով մեր ժողովրդի դուստրը եւ մեր Սուրբ Եկեղեցու հարազատ զավակը լինելով՝ իր կարեւոր գործունեությամբ տարիներ շարունակ մեծ ներդրում է բերում Ավստրալիայի քաղաքական եւ հասարակական կյանքի առաջընթացին: Մենք մեծ ուրախությամբ տիկին Գլադիս Բերեջիկլյանին հանդիպել ենք հայրենի մեր երկրում՝ զգալով նրա հավատքի ու աստվածսիրության ջերմությունը, ազգասիրությունն ու հայրենասիրությունը: Հպարտ ենք, որ մեր ժողովուրդն ունի այսպիսի օրհնյալ զավակներ, ովքեր իրենց կյանքով ու գործով հավելում են պատիվն ու հեղինակությունը մեր ժողովրդի:

Մեզ համար, սիրելինե՛ր, որպես Հայ Եկեղեցու հոգեւոր պետի եւ առաջին սպասավորի, հոգու բերկրանք է տեսնել այն սերն ու հարգանքը, որ մեր ժողովրդի զավակները՝ իբրեւ արժանավոր եւ օրինապահ քաղաքացիներ, վայելում են Ավստրալիայում: Մենք ուրախ ենք, որ այստեղ նաեւ քույր Եկեղեցիների ներկայացուցիչները արդյունավոր գործակցության ու փոխհարաբերությունների մեջ են Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի, հայ համայնքի հետ՝ իրենց նպաստը բերելով Քրիստոսի Եկեղեցում սիրո եւ համերաշխության ոգու զորացման, Տիրոջ Ավետարանի քարոզչության ու տարածման կարեւոր գործում:

Սիրելինե՛ր, Մենք եւ Մեզ ուղեկցող շքախմբի անդամները եկել ենք Հայաստան աշխարհից, ուր քրիստոնեության լույսը տարածվել է Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությամբ: 301 թ. Հայաստանը դարձավ առաջին երկիրը աշխարհում, որտեղ քրիստոնեությունը հռչակվեց որպես պետական կրոն: Դարերի ընթացքում մեր ժողովուրդը քրիստոնեական իր հավատքով ստեղծեց բարձր մշակույթ, գիր ու դպրություն, հաղթահարեց բազում փորձություններ ու ավերներ, վերապրեց Օսմանյան կայսրության կողմից իրականացված ցեղասպանությունը եւ այսօր իր նոր կյանքի հաղթանակներն ու հաջողություններն է կերտում: Լինելով վերստին անկախացյալ երիտասարդ պետություն, դիմագրավելով արդի ժամանակի մարտահրավերներն ու խնդիրները, Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից շրջափակումը, Հայաստանի ու Արցախի սահմաններում պատերազմական իրավիճակը՝ Հայաստանն իր հաստատուն քայլերն է կատարում՝ որպես ազատ, ժողովրդավար եւ իր

հարեւանների հետ խաղաղության ու համերաշխության ձգտող պետություն: Հայ ժողովրդի առջեւ կանգնած է նաեւ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման եւ արցախահայության ազատ ու անկախ կյանքի արդար իրավունքի հաստատման կարեւորագույն խնդիրը: Արցախի պետությունը պատմական Հայաստանի մաս եւ հայոց հող լինելով՝ Խորհրդային իշխանությունների կողմից բռնակցվել էր Ադրբեջանին, սակայն ինքնորոշման արդար սկզբունքով Արցախը հաստատեց իր անկախությունը եւ այսօր պայքարում է ազատ ապրելու իր իրավունքը պաշտպանելու համար: Մեր ժողովրդի մեծ մասը Հայոց ցեղասպանությունից հետո սփռվել է աշխարհի չորս կողմերում, բնակություն հաստատել հյուրընկալ պետություններում, ինչպես որ այստեղ՝ Ավստրալիայում, շարունակելով երկրորդ հայրենիք դարձած այս երկրում ազգային ու հոգեւոր իր կյանքը: Այստեղ հայորդիների աշխույժ գործունեությունը նաեւ մեծ ու կարեւոր նպաստ է Հայաստանի եւ Ավստրալիայի փոխհարաբերությունների եւ փոխգործակցության ամրապնդմանը: Մեր երկրների բարեկամությունն ու համագործակցությունը, հիրավի, առավել կարդյունավորվի դիվանագիտական առաքելությունների գործունեությամբ: Լիահույս ենք, որ Հայաստանի Հանրապետության եւ Ավստրալական Միության պատկան մարմինները առաջիկայում համապատասխան քայլեր կնախաձեռնեն մեր պետությունների միջեւ դիվանագիտական կապերի հաստատման համար: Մենք Մեր Հովվապետական այցի ընթացքում հորդորել եւ շարունակելու ենք քաջալերել Մեր զավակներին, որպեսզի նրանք նույն ոգով շարունակեն իրենց բարի ներդրումը բերել Ավստրալիայի շինությանն ու զարգացմանը՝ մնալով օրինակելի, նվիրյալ քաղաքացիները օրհնյալ այս երկրի:

Սիրելինե՛ր, Մեր գնահատանքն ենք վերստին հայտնում այս հանդիպման նախաձեռնության ու կազմակերպման եւ ձեր մասնակցության համար: Ի սրտե մաղթում ենք ձեզ բոլորիդ նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ պատասխանատու ձեր առաքելության մեջ:

Աղոթում ենք, որ Տերը երկար տարիների արեւշատություն պարգեւի ձեզ ամենքիդ, եւ Իր երկնառաք շնորհները բաշխի Ավստրալիային, այստեղ բնակվող ժողովրդին՝ պահելով սիրո, խաղաղության եւ համերաշխության մեջ:

* * *

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շքախմբի ուղեկցությամբ այցելեց Սիդնեյի Սուրբ Աստվածածին կաթոլիկ Մայր Տաճար: Այս տաճարում Հայոց Ցեղասպանության 100-ամյակի առիթով Սուրբ Պատարագ մատուցեց

Գերաշնորհ Տ. Հայկազուն եպս. Նաջարյանը՝ ներկայությամբ շուրջ 2000 հավատացյալների եւ հանդիսապետությամբ Սիդնեյի Կաթոլիկ թեմի առաջնորդ Բարձրաշնորհ Տեր Էնթոնի արքեպիսկոպոս Ֆիշըրի։

Առաջնորդարանում Վեհափառ Հայրապետին ողջունեցին Մայր Տաճարի լուսարարապետ Հայր Դոն Ռիչըրդսոնը եւ օգնական եպիսկոպոս Ռիչըրդ Ամբըրզը։

Կատարվեց շրջապտույտ, Հայոց Հայրապետին ներկայացվեց ազգային ժառանգություն նկատվող տաճարի երկհարյուրամյա պատմությունը։

Շրջապտույտի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն աղոթք բարձրացրեց տաճարի մուտքին 2018 թվականի դեկտեմբերի 18-ին հայոց մեծ բարեկամ Բարձրաշնորհ Տեր Էնթոնի արք. Ֆիշըրի ջանքերով եւ տեր եւ տիկին Ստեփան եւ Հիլդա Գրքաշարյանների նվիրատվությամբ զետեղված հայկական խաչքարի առջեւ՝ նվիրված Հայոց Ցեղասպանության հիշատակին։

Այցի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը հարցազրույց տվեց Սիդնեյի Կաթոլիկ առաջնորդարանի «Catholic Weekly» թերթին։ Այնուհետեւ հայրապետական շքախմբի անդամների, թեմական եւ ծխական մարմինների անդամների եւ ազգային բարերարներ տեր եւ տիկին Հայկ եւ Էլզա Դիդիզյանների ներկայությամբ տեղի ունեցավ նվերների փոխանակում։ Լուսարարապետին ընծայվեց Սուրբ Էջմիածնի եւ Արարատի մանրանկար, իսկ օգնական եպիսկոպոսին՝ Սուրբ Ծննդյան պատկեր։

ՓԵՏՐՎԱՐԻ 5. Ավստրալիայում հովվապետական այցով գտնվող Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը փետրվարի 5-ին այցելեց Համազգայինի Արշակ եւ Սոֆի Գոլստըն Ճեմարան՝ ուղեկցությամբ իր շքախմբի եւ Ավստարալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանի։

Կրթական հաստատության առջեւ Հայոց Հորը աղ ու հացով դիմավորեցին ճեմարանի տնօրեն Էդի Դեմիրճյանը, ուսուցչական կազմը եւ շուրջ 350 աշակերտներ։ Աղ ու հացի արարողությունից հետո ամենքը մեկտեղվեցին ճեմարանի դահլիճում։

Ճեմարանի տնօրենի ողջույնի խոսքից հետո աշակերտները ներկայացան գեղարվեստական հայտագրով՝ մեծ գոհունակություն եւ ուրախություն պարգեւելով Ամենայն Հայոց Հայրապետին։ Հայտագրի

ավարտին Նորին Սրբությանը՝ իր հայրական օրհնությունը բաշխեց աշակերտներին եւ բոլոր աշակերտներին ընծայեց Սուրբ Էջմիածնից բերված խաչիկներ։ Ճեմարանին ի հիշատակ փոխանցվեց Սրբոց Նահատակաց մանրապատկեր։

Ճեմարան այցից հետո Վեհափառ Հայրապետը այցելեց Մաքքուարի Փարք գերեզմանատան հայկական բաժինը, որտեղ հարգանքի տուրք մատուցեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի երջանկահիշատակ առաջնորդ Տ. Աղան արք. Պալիոզյանի շիրիմին եւ աղոթք բարձրացրեց նրա հոգու հանգստության համար։

ՓԵՏՐՎԱՐ 6. *Ավստրալիայում հովվապետական այցով գտնվող Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը փետրվարի 6-ին այցելեց ՀԲԸՄ «Ալեքսանդր» վարժարան՝ ուղեկցությամբ իր շքախմբի, Ավստարալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանի եւ թեմի եկեղեցականների։*

Վարժարանի առջեւ Նորին Սրբությանը դիմավորեցին կրթօջախի հիսուն սաները, ՀԲԸՄ Սիդնեյի մասնաճյուղի ատենապետ տիար Միհրան Լեփեճյանը, հոգաբարձական կազմը՝ ղեկավարությամբ ատենապետուհի տիկին Սոսի Կիրակոսյանի, տնօրեն Մանուկ Դեմիրճյանը, ուսուցիչները եւ ծնողները։ Աղ ու հացի օրհնությունից հետո վարժարանի դահլիճում տեղի ունեցավ բարիգալստյան հանդիսություն։ Հնչեցին Ավստրալիայի եւ Հայաստանի օրհներգերը, ապա Վեհափառ Հորը բարի գալուստ մաղթեցին պարոն Սարգիս Մանուկյանը եւ աշակերտներից Սամսոն Բանիքյանը։

Վարժարանի տնօրեն Մանուկ Դեմիրճյանը իր խոսքի մեջ ներկայացրեց վարժարանի առաքելությունը, անցած պատմական ուղին՝ լուսանկարների ցուցադրությամբ ընդհանուր գծերով իրար հետ առնչելով Վեհափառի առաջին այցելությունը եւ վարժարանի կապը հայրենիքի եւ մանավանդ Ս. Էջմիածնի հետ, ընդգծելով կրոնաբարոյական դաստիարակությունը, որ կրթականի եւ ազգայինի հետ մեկտեղ կատարվում է ամենայն բծախնդրությամբ։

Այնուհետեւ վարժարանի աշակերտները հանդես եկան գեղարվեստական հայտագրով՝ իրենց երգերով եւ արտասանություններով զարմանք պատճառելով Վեհափառ Հայրապետին, հոգեւորականաց դասին եւ ներկաներին։

Այս առիթով իրենց խոսքը մանուկներին ու պատանիներին ուղղեցին Գերաշնորհ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը եւ թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տեր Հայկազուն արք. Նաջարյանը՝ մասնավորաբար գնահատելով մատղաշ սերնդի ելույթը եւ սրտի անհուն գոհունակությամբ հաստատելով, որ ապագան այս ընթացքով հաստատուն է ու փայլուն եւ հակառակ հեռավորության՝ հայրենիքը՝ ներկա։

Խոսքի ավարտին Հայկազուն Սրբազանը հրավերով Նորին Սրբությունը՝ իր հայրական օրհնությունը բաշխեց վարժարանի աշակերտներին եւ նվերներ փոխանցեց վարժարանին ու տնօրենությանը, իսկ մանուկներին ընծայեց Սուրբ Էջմիածնից բերված խաչիկներ։

Նույն օրը Նորին Սրբություն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց «Ալեքսանդր» հայկական հանգստյան տուն։ Տնօրենության եւ խնամակալ մարմնի ուղեկցությամբ Նորին Սրբությունը շրջապտույտ կատարեց, առանձնաբար իր հայրական օրհնությունները բաշխեց հաստատության մեջ խնամվող տարեցներին։ Աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը զրուցեց հայորդիների հետ, բարձր գնահատեց խնամակալ խորհրդի հոգատար աշխատանքը, ձեռքբերումները եւ աստվածահաճո գործունեությունը։

Ի հիշատակ իր այցելության Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանգստյան տանը նվիրեց Տիրոջ Վերջին ընթրիքի սրբապատկեր։

Փետրվարի 5-ին եւ 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդարանում ընդունեց հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներին։ Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն արք. Նաջարյանը։

Վեհափառ Հայրապետին այցելել էին Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության Ավստրալիայի վարիչ կազմի, Հայ Հեղափոխական դաշնակցության Ավստրալիայի Կենտրոնական կոմիտեի, Ռամկավար Ազատական կուսակցության Ավստրալիայի վարիչ մարմնի, Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միության, Հայ Օգնության Միության շրջանային վարչությունների, Ավստրալիայի Հայ Դատի հանձնախմբի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Սիդնեյի մասնաճյուղի

վարչության, եկեղեցական վարչության, Ավստրալիայի Հայ Ավետարանական Ընկերակցության վարչության ներկայացուցիչները, Հայ Ավետարանական Եկեղեցու հոգեւոր հովիվը, ինչպես նաեւ Ավստրալիայում Արցախի մնայուն ներկայացուցիչը։

Հանդիպման ընթացքում հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներն իրենց գոհունությունը հայտնեցին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն եւ պատրաստակամությունը՝ միասնական ճիգերով առաջ տանելու ազգային աշխատանքները։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ծանոթանալով յուրաքանչյուր կազմակերպության ծավալած գործունեությանը, նրանց փոխանցեց իր հայրական օրհնությունն եւ հաջողության մաղթանքները։

ՓԵՏՐՎԱՐԻ 8–9. *Փետրվարի 8-ի առավոտյան Վեհափառ Հայրապետը թեմի առաջնորդարանում հանդիպեց ավստրալական մամուլի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում պատասխանեց Հայ Առաքելական Եկեղեցուն եւ մասնավորապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությանն առնչվող հարցերին, ինչպես նաեւ ներկայացրեց իր տպավորությունները Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի թեմ կատարած իր ընթացիկ այցելության վերաբերյալ։*

Մամլո ասուլիսից հետո Վեհափառ Հայրապետն իր շքախմբի եւ թեմի հոգեւոր դասի ներկայությամբ հանդիպում ունեցավ Մերձավոր Արեւելքի մի շարք եկեղեցիների՝ Ղպտի Ուղղափառ, Ղպտի Կաթոլիկ, Մելքիտ Կաթոլիկ, Մարոնիտ, Ասորի Ուղղափառ Եկեղեցիների տեղական առաջնորդների հետ։ Վերջիններս ջերմ ողջունեցին Վեհափառ Տիրոջը եւ իրենց երախտագիտությունը եւ շնորհակալությունը հայտնեցին նրան՝ 2018 թ. հունիսին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իրենց մեկ շաբաթ հյուրընկալելու համար։

Հանդիպումից հետո Վեհափառ Հայրապետը իր օրհնությունը բերեց եւ նվերներ բաշխեց այն անձանց, որոնք գործուն մասնակցություն էին ունեցել Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի թեմ իր այցելության կազմակերպման գործում։

Այնուհետեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն արք. Նաջարյանի եւ իր շքախմբի, Սիդնեյից մեկնեց Ավստրալիայի հայաշատ երկրորդ քաղաք՝ Մելբուռն։

Փետրվարի 9-ի առավոտյան Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Մելբուռնի Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցի, որտեղ տեղի ունեցավ «Հրաշափառի» արարողություն։

Ամենայն Հայոց Կաթողիկոսին մեծ խանդավառությամբ դիմավորեցին այս օրհնյալ առիթով եկեղեցում համախմբված Մելբուռնի հայ համայնքի ներկայացուցիչներ՝ առաջնորդությամբ հոգեւոր հովիվ Արժանապատիվ Տ. Խաչեր քահանա Հարությունյանի եւ եկեղեցու ծխական խորհրդի։

Աղ ու հացի արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը, օրհնելով ժողովրդին, թափորով, «Հրաշափառի» ներքո առաջնորդվեց եկեղեցի, ուր կատարվեց համատեղ աղոթք։

Այնուհետեւ ներկա հավատավոր ժողովրդի անունից Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցը Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմ եւ, մասնավորաբար, Մելբուռն ողջունեց Հայկազուն Սրբազանը՝ ընդգծելով Հայոց Հոր այցերի կարեւոր նշանակությունը հայ համայնքի համար եւ հրավիրելով Նորին Սրբությանն իր օրհնությունն ու պատգամը բերելու բարեպաշտ ժողովրդին։

Հայրապետական «Պահպանիչ» աղոթքից հետո ժողովուրդը հնարավորություն ստացավ համբուրելու Վեհափառ Հոր Աջը եւ նրանից ստանալու նվեր խաչիկներ իբրեւ օրհնություն Ս. Էջմիածնի։

«Հրաշափառի» արարողության ավարտին, եկեղեցու կից սրահում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ «Ակինյան» եւ Համազգայինի «Մեսրոպ Մաշտոց» մեկօրյա վարժարանների աշակերտների հետ։

Երկու կրթօջախների տնօրենների բարիգալստյան ջերմ խոսքերից հետո աշակերտները հանդես եկան փոքրիկ գեղարվեստական հայտագրով։

Այնուհետեւ մանուկներին իր հայրական օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ պատգամելով լինել մեր սուրբ նախնյաց արժանավոր ժառանգները, իրենց բարեջան եւ ուշիմ ուսումնառությամբ դառնալ ազգի նվիրյալ զավակներ՝ կերտելու հայոց բարօր ու պայծառ կյանքը։

Նորին Սրբությունը նաեւ իր օրհնությունը բերեց վարժարանների տնօրեն կազմին եւ մանկավարժներին՝ բարձրորեն գնահատելով մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործում իրենց կողմից ներդրվող անդուլ ջանքերը, հանձնառությունն եւ նվիրումը։

Նույն օրը Եկեղեցու սրահում պաշտոնական հանդիպում տեղի ունեցավ Մելբուռնի հայկական կազմակերպությունների ներկայացուցիչնե-

AGBU Alexander Primary School
come
Բարի Գալուստ

NINETEEN

րի եւ եկեղեցու հովանու ներքո գործող մարմինների ներկայացուցիչների հետ։

ՓԵՏՐՎԱՐԻ 10. *Փետրվարի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Պատարագ մատուցեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի Մելբուռն քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցում։*

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին թեմական խորհրդի եւ ծխական եկեղեցական վարչության անդամներ, Քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, հայկական կազմակերպությունների ղեկավարներ եւ հավատավոր բազում հայորդիներ։

Թափորը, որին մասնակցում էին նաեւ Քույր Եկեղեցիների հոգեւորականներ, ամպհովանիի ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսին առաջնորդվեց դեպի եկեղեցի, ուր ձեռամբ Վեհափառ Հայրապետին մատուցվեց Սուրբ եւ Անմահ Պատարագ։

Սուրբ Պատարագին որպես առընթերականեր սպասավորում Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն արք. Նաջարյանը։

Սուրբ Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերստին իր օրհնությունն ու պատգամը բերեց մելբուռնաբնակ հայությանը։

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՄԵԼԲՈՒՌՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(10 փետրվար, 2019 թ.)

«Նա, որ հաստատեց մեզ ի Քրիստոս ձեզ հետ միասին
եւ օծեց մեզ, Աստուած է, որ մեզ կնքեց էլ
եւ Հոգու առհաւատչեան դրեց մեր սրտերի մէջ»
(Բ. Կորնթ. Ա. 21–22)։

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր,

Ուրախ ենք, որ Աստծու կամքով վերստին այցելել ենք ձեզ՝ բերելու Հայրական մեր սերը եւ հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

օրհնությունները: Փառք ենք մատուցում Տիրոջը, որ կրկին իրականություն է դարձել բերկրալի հանդիպումը Մելբուռնի Մեր սիրելի՛ զավակների հետ: Քաջալերված է Մեր հոգին, որ տեսնում ենք ձեզ հավատավոր հոգով, համախմբված այս եկեղեցու խնկաբույր կամարների ներքո՝ հակառակ տեղացող հորդ անձրեւին:

Ուրախության նույն զգացումով օրեր առաջ հանդիպեցինք Սիդնեյի ձեր եղբայրներին ու քույրերին: Միասնաբար աղոթեցինք եկեղեցու նվիրական հարկի ներքո, այցելեցինք կրթական եւ բարեսիրական հաստատություններ, հանդիպումներ ունեցանք երիտասարդների, տարեցների, ազգային կառույցների եւ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ, հաղորդ դարձանք այն ձեռքբերումներին, որ մեր զավակնք արձանագրել են իրենց համայնքում:

Ավստրալիայի օրհնյալ երկրում եկեղեցական մեր անդաստանի եւ ազգային կյանքի բարեզարդությունը բարի արդյունքներն են մեր ժողովրդի հավատքի եւ նախանձախնդրության: Փառք Աստծուն, որ ի Քրիստոս հաստատեց մեր ժողովրդին եւ Սուրբ Հոգու առհավատչյան դրեց մեր հոգիներում: Այսօր ձեզ հետ միասնական աղոթքի այս խորհրդանշական պահին Սրբազան Պատարագի մաղթանքն ենք բարձրացնում՝ հայցելով երկնավոր մեր Տիրոջ շնորհներն ու պահպանությունը հավատավոր մեր ժողովրդին. «Տէր Աստուած մեր, կեցո՛ զժողովուրդս Քո, օրհնեա՛ զժառանգութիւնս Քո, եւ զլրումն Եկեղեցւոյ Քո պահեա՛»:

Աստծու Սուրբ Աջի օրհնության եւ պահպանության ներքո է մեր ժողովուրդը հարատեւել, հաղթահարել դարերի փորձությունները, գիր ու դպրություն, հարուստ մշակույթ ստեղծել, որը կրում է մեր ժողովրդի քրիստոնեական ոգու եւ հավատքի վառ դրոշմը: Հայրենիքից հեռու սփռվելով անգամ մեր ժողովրդի զավակները շեն ու պայծառ համայնքներ են կերտել՝ բարեզարդ եկեղեցիներով, կրթարաններով ազգային ու մշակութային հաստատություններով: Աշխարհի տարբեր երկրներում հայ համայնքները, հիրավի, մեր ժողովրդի ինքնության նվիրական օրրաններն են, որոնք իրենց յուրահատկությամբ ու ավանդույթներով հարստացնում են մեր ժողովրդի պատմությունը եւ իրենց բերած նպաստով սատար լինում նաեւ մեր հայրենիքի առաջընթացին ու զորացմանը: Այս իրականության առջեւ տեսանելի է, որ մեր ժողովրդի կրած նեղությունները, ողբերգությունները փոխհատուցվում են երկնաշնորհ ձեռքբերումներով, քանզի Տերը օրհնում եւ ապրեցնում է Իրեն հավատարիմ ժողովրդին:

Սիրելի՛ հավատավոր զավակներ մեր, ամբողջ Ավետարանը, Աստծու խոստումները անխախտ կերպով կապված են Տիրոջ հանդեպ

հավատարմությամբ ապրելու հետ։ Այսպես է, որ մարդու եւ ժողովուրդների երկրային ճանապարհը, կյանքն ու գործը զարդարվում են աստվածապարգեւ շնորհներով։ Տիրոջ զորակցությամբ եւ ձեր հավատի, ազգասիրության ու եկեղեցասիրության շնորհիվ է, որ դուք եւ ձեր զավակները Մայր հայրենիքից հեռու՝ Ավստրալիայի այս հեռավոր ափերում, պահպանում եք ազգային ինքնությունը, շեն պահում ձեր համայնքը, ձեր եկեղեցիները եւ ազգային կառույցները։

Ձեր ու ձեր զավակների ազգային ու եկեղեցական կյանքը միշտ շեն կլինի մեր հայրերի հավատին, մեր Եկեղեցուն, սրբազան արժեքներին հավատարիմ, բարեպաշտ ընթացքով՝ ամենայն հարգանքով հանդերձ այլ ժողովուրդների եւ նրանց մշակութային առանձնահատկությունների հանդեպ։ Մեր Սուրբ Եկեղեցին իր յուրաքանչյուր զավակի հույսի ապաստանն է, մեղքի քավարանը, մշտական բաշխողը աստվածային ողորմությունների, երկնային անսպառ օրհնությունների ու շնորհների։ Մեր Եկեղեցու հովանու ներքո է ամուր մնում ձեր հաղորդակցությունը հոգեւոր արժեքներին, հայրենիքին, ազգային մեր արմատներին, մեր պատմությանը։ Հոգեկերտ այդ ակունքներից սնվելով դուք համայնքում պիտի շարունակեք արդյունավորել մեր մանուկներին կրթող հաստատությունների, ազգային մշակութային կազմակերպությունների գործունեությունը, նաեւ նախաձնախնդրորեն ձեր ավանդը բերեք հայրենական մեր կյանքին։

Այն մեծ տարածությունը, սիրելինե՛ր, որ բաժանում է ձեզ Հայաստանից երբեք չի կարող բաժանել ձեր սրտերը հայրենիքից։ «Ուր ձեր գանձերն են, այնտեղ եւ ձեր սրտերը կլինեն»,– ասում է մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս։ Ձեր սերն ու մտահայացքը, արդարեւ, ուղղված են դեպի մեր ոգեղեն գանձերը, դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, դեպի Արարատ, դեպի Հայաստան ու Արցախ հայրենի մեր երկիրը, որտեղ ձեր եղբայրներն ու քույրերը հույսով ու լավատեսությամբ, քաջարի սրտով արարում եւ կերտում են նոր կյանքը մեր հայրենիքի։

Արդ, սիրելինե՛ր, միշտ ապրեք պայծառ հավատքով, եկեղեցասիրությամբ, հաստատուն պահեք ձեր հայրենանվիրումն ու ազգասիրությունը, շարունակեք գովաբան ընթացքով ու գործերով մասնակցություն եւ ներդրում բերել հայրենիքի առաջընթացին ու բարգավաճմանը։ Շեն պահեք ձեր համայնքը, ազգային բոլոր կառույցները, որոնց հովանու ներքո զորանում է ձեր կյանքը, որոնց հովանու ներքո հասակ են առնում եւ ձեր արժանավոր զավակները դառնում այսօր մանուկ եւ պատանի ձեր դուստրերն ու որդիները։

Սիրելինե՛ր, հեռու լինելով ձեզանից, Մենք մշտապես կրում ենք ձեզ Մեր հոգում: Եւ հանապազ Միածնաէջ Մայր Տաճարում աղոթք ենք առ Աստված բարձրացնում, հայցելով՝ «Տէր Աստուած մեր, կեցո՛ զժողովուրդս Քո, օրհնեա՛ զժառանգութիւնս Քո, եւ զլրումն Եկեղեցւոյ Քո պահեա՛»:

Այս մաղթանքով Հայրապետական մեր գնահատանքն ենք բերում թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանին, բարեջան ձեր հոգեւոր հովվին եւ եկեղեցական բոլոր սպասավորներին, նրանց առաքելությանն աջակցող թեմական եւ ծխական խորհուրդների պատվարժան անդամներին, կրթական, ազգային, մշակութային հաստատությունների ջանադիր բոլոր աշխատակիցներին եւ անդամներին: Մեր գնահատանքն ենք բերում Թեմական Խորհրդին եւ բոլոր այն նվիրյալ անձանց, ովքեր միասնաբար եւ նվիրումով աշխատանք տարան Ավստրալիայում Մեր Հովվապետական այցելությունը եւ հավատավոր հայորդիներիդ հետ Մեր հանդիպումները կազմակերպելու համար:

Առ Աստված աղոթքով մաղթում ենք, որ միշտ պայծառ ու շեն լինի Ավստրալիայի հայ համայնքը, ձեր կյանքում Տիրոջ օրհնությունը առատանա նորանոր ձեռքբերումներով, եկեղեցաշեն ու ազգանպաստ հաջողություններով: Թող երկնահեղ բարիքները անպակաս լինեն ձեզանից եւ ձեր ընտանիքներից:

Թող մեր Տիրոջ Աջի պահպանությունը, սերը, շնորհներն ու ողորմությունը լինեն ձեզ հետ եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի՝ այսօր եւ միշտ եւ հավիտյան. ամեն:

* * *

Սուրբ Պատարագի ընթացքում Վեհափառ Հայրապետը Տ. Խաչեր քահանային պարգեւատրեց քահանայական լանջախաչով, իսկ Սուրբ Աստվածածին եկեղեցուն նվիրաբերեց արծաթյա սկիհ: Սուրբ Պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետի ձեռամբ բացվեց եկեղեցու հարեւանությամբ կանգնեցված հայկական խաչքարը՝ ի նշանավորումն Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Մելբուռն երկրորդ հովվապետական այցելության: Այս առիթով Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց խաչքարի տեղադրմանն իրենց նպաստը բերած հավատավոր հայորդիներին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ավստրալիա կատարած հովվապետական այցի առիթով փետրվարի 10-ին Մելբուռնում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն եւ ճաշկերույթ, որի ժամանակ Մելբուռնի համայնքի կողմից

Վեհափառ Հայրապետին նվիրվեց ակնակուռ մատանի։ Ճաշկերույթին ներկա էին թեմի հոգեւոր սպասավորներ, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի թեմական եւ ծխական խորհուրդների անդամներ, Մելբուռնի հայ համայնքի ներկայացուցիչներ, բարերարներ եւ հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ։

Ընդունելության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ նրա շքախմբին ողջունեցին թեմական խորհրդում Մելբուռնի ներկայացուցիչ տիար Ժակ Հոդագործյանը եւ Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ Արժանապատիվ Տեր Խաչեր քհն. Հարությունյանը։

Հովվապետական այցի առիթով ավստրալահայության անունից իր երախտագետ զգացումները եւ որդիական սերը Հայոց Հորը փոխանցեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հայկազուն արք. Նաջարյանը՝ վերստին ընդգծելով, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցերը սփյուռքի համայնքներ մեծ խանդավառություն եւ նոր լիցքեր է հաղորդում հայրենիքից հեռու բնակվող հայորդիներին։

Պաշտոնական ճաշկերույթի ավարտին մելբուռնահայությանն իր պատգամն ու օրհնությունը բերեց Նորին Սրբություն Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը։

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԱՌԻԹՈՎ ՄԵԼԲՈՒՌՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(10 փետրվարի, 2019 թ.)

Սիրելի՛ Սրբազան,

Հոգեշնորհ եւ Արժանապատիվ հայրեր,

Սիրելի՛ հավատավոր զավակներ մեր եկեղեցու,

Ավստրալիայի Հայոց Թեմական խորհրդի եւ առաջնորդ Սրբազանի հրավերով Մեր այցը Ավստրալիա, անցնող օրերի հանդիպումները, միասնական աղոթքը Մեր հավատավոր զավակների հետ, կազմակերպված միջոցառումները, ինչպես եւ նորակառույց Առաջնորդարանի բացումը Սիդնեյում, անհուն ուրախություն եւ բաջալերություն պարգեւեցին Մեզ։ Մենք կրկին զգացինք իր հոգեւոր եւ ազգային արժեքների, իր ինքնության, մայր հայրենիքի եւ

Սուրբ Էջմիածնի հանդեպ ավստրալաբնակ մեր ժողովրդի սերը, որը միավորում է համայն մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի:

Արդարեւ, որտեղ էլ ապրում է մեր ժողովուրդը՝ հայացքն ուղղված է դեպի իր հավատքի ակունքը՝ Սուրբ Էջմիածինը եւ իր բնօրրան հայրենիքը, որտեղ Արարատի հայացքի ներքո ձեւավորվել է իբրեւ ժողովուրդ եւ ապրել հազարամյակները իր պատմության: Ասում են՝ հայերի ամենասիրած նկարները Արարատի եւ Մայր Տաճարի պատկերներն են: Եւ դա ճշմարտություն է ու նաեւ բնական է, քանի որ այդ պատկերները մեր ժողովրդի հոգում են՝ իբրեւ դրոշմ մեր ինքնության, հոգեւոր եւ ազգային մեր արժեքների, որոնք միավորում են մեզ մայրցամաքից մայրցամաք, համախմբում եկեղեցիների գմբեթների ներքո ու ազգային կյանքի մեջ: Որքան էլ տարբեր երկրներում մեր ժողովրդի զավակները տարբեր մտածողության, կրթության ու դաստիարակության կրողն են, նրանց մեջ բաբախում է սիրտը հայկականության, կոչնակը ազգային ինքնության: Իրոք, ի՞նչն է այստեղ բնակվող հայորդուն մղում ամենօրյա իր հոգսերից բացի մտածելու մայր հայրենիքի դժվարությունների մասին, հայրենիքում կամ սփյուռքի մեկ այլ համայնքում բնակվող իր ազգակցի կարիքների մասին, եթե ոչ մեր ժողովրդի լուսավոր գալիքի տեսիլքը, հոգեւոր եւ ազգային արժեքների կարեւորության գիտակցումը եւ որպես ազգի ու եկեղեցու զավակ՝ որդիական պատասխանատվությունը:

Սիրելինե՛ր, քրիստոնյա եւ ազգային մեր ինքնությունը պահպանելու այդ ներքին կոչնակն է ամենուր ղողանջել հայ համայնքի ունկերին՝ առաջնորդելով հաճախ զրկանքների գնով ձեռնամուխ լինելու նախ եկեղեցու կառուցմանը եւ ապա կողքին՝ հայկական դպրոցի հաստատմանը, որպեսզի երաշխավորվի հավատքի եւ ազգային ոգու հարատեւությունը: Դրա վառ վկայությունները տեսնում ենք ինչպես Սիդնեյում, այնպես եւ Մելբուռնում: Տասնամյակներ առաջ այս օրհնյալ երկրում հաստատված հայորդիները, ձեր հայրերն ու մայրերը, նույնպես իրենց սրտի ձայնին ունկնդիր, իրենց հոգու մղումով ստանձնեցին ազգաշեն այդ առաքելությունը, որի շնորհիվ աշխարհի այս մասում նույնպես վեր հառնեցին հայկական եկեղեցիներ եւ ազգային հաստատություններ, հոչակվեց նաեւ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու թեմը, որի հիսնամյակը լրացավ 2018 թվականին: Սիդնեյում նոր Առաջնորդարանի բացումը նաեւ ընծա է այդ հոբելյանին, հոգեւոր եւ ազգային կյանքը զորացնելու հրավեր ողջ ավստրալաբնակ հայ համայնքին:

Այս այցի ընթացքում եւս Մենք տեսանք եւ հաստատեցինք, որ հայկական համայնքն Ավստրալիայում արժանանում է տեղական իշխանությունների եւ հոգեւոր առաջնորդների ջերմ ու հարգալից վերաբերմունքին եւ

գնահատանքին։ Մենք գոհունակությամբ ականատես եղանք համայնքի գոհարժան ձեռքբերումներին, ինչպես նաեւ՝ այսօրվա հրամայականներին եւ ձեր նվիրյալ ջանքերին, որոնցով, ինչպես ողջ սփյուռքը, ջանում եք հաղթահարել ազգային ինքնության, մայրենի լեզվի ու արժեքների պահպանության մարտահրավերները։ Ժամանակը, արդարեւ, ավելին է պահանջում, առավել ջանքեր, համախմբում։ Մենք կարիքն ունենք ազգային եւ եկեղեցական կյանքի մեջ մեր ժողովրդի զավակների առավել ներգրավման, ազգային միասնականության ամրապնդման եւ լավատես հոգով ներշնչուն գործունեության ծավալման։ Առանձնակի կարեւորությամբ հարկ է աշխատանք իրականացնել երիտասարդության հետ, որպեսզի պատասխանատու զգան իրենց համայնքային կյանքում։

Հայրապետիս հորդորն է, սիրելինե՛ր, որ ամուր հավատքով ու վառ հույսով նախանձախնդիր մնաք ձեր եկեղեցական եւ ազգային կյանքի հանդեպ։ Շարունակեք պայծառացնել ձեր համայնքը, ձեր զավակներին դարձրեք աշակերտներ Ավետարանի, որպեսզի լինեն Աստծու օրհնության ու շնորհների ներքո եւ կառուցեն իրենց երջանիկ կյանքը։ Նրանց կրթեք եկեղեցասիրությամբ, հայրենասիրությամբ, որպեսզի մեր ժողովուրդը որդոց որդի շարունակի կրել հոգում՝ որպես նվիրական խորհուրդ, Արարատի ու Սուրբ Էջմիածնի պատկերը եւ հոգեւոր ու ազգային իր արժեքներով իրագործի իր իղձերը եւ կերտի իր հզոր, առաջընթաց հայրենիքը, իր լուսավոր ապագան։

Մայր Աթոռը, սիրելինե՛ր, Տիրոջ օրհնությամբ արդյունավորում է իր առաքելությունը։ Եկեղեցիներ են կառուցվում, եկեղեցականներ պատրաստվում, հոգեւոր խոսքը մատուցվում է նաեւ հեռուստա եւ ռադիո հաղորդումներով, հրատարակվող գրքերով։ Եկեղեցականները սպասավորում են նաեւ բանակում, սոցիալական հաստատություններում։ Աջակցություն է իրականացվում ծնողազուրկ երեխաներին եւ կարիքավորներին։ Այս ձեռքբերումները իրագործվում են նաեւ սփյուռքի հայության մեծ աջակցությամբ եւ առավել ոգեշնչում ու գոտեպնդում հայրենաբնակ ձեր քույրերին ու եղբայրներին, ովքեր իրենց կյանքով պաշտպանում են մեր երկիրը եւ շենացնում այն ու դարձնում տունը ողջ հայության։ Մեր հայրենիքում այսօր ընթացող փոփոխությունները հույսն են պարգեւում զարգացման հեռանկարների, որոնցում կարեւոր ավանդ պիտի բերեն նաեւ սփյուռքի համայնքները, որպեսզի հայրենիքով միավորված՝ բարձրանա ազգային մեր կյանքը ի սփյուռս աշխարհի։

Սիրելինե՛ր, քաջալեր հոգով Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ։ Մեր գնահատանքը՝ Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանին, նրան լծակից հոգեւոր սպասավորներին՝ մեր ժողովրդի հոգեւոր

կյանքի հանդեպ դրսեւորած նախանձախնդրության համար: Բարձր ենք գնահատում թեմական խորհրդի, եկեղեցական վարչությունների անդամների, ազգային կառույցներում ներգրավված մեր ժողովրդի զավակների նվիրյալ ծառայությունը ի նպաստ թեմական ու համայնքային կյանքի պայծառության: Մեր գնահատանքն ենք բերում նաեւ Մեր այցն ու ընդունելությունը ամենայն սիրով ու պատասխանատվությամբ կազմակերպած բոլոր հայորդիներին, տիկնանց միության անդամներին, դպրոցների հոգաբարձուներին, տնօրեն վարչությանց անդամներին, մանկավարժներին, ինչպես եւ՝ արվեստի գործիչներին, այսօր գեղեցիկ կատարումով իրենց ձիրքն ու տաղանդը մեզ ներկայացնող պարախմբի ղեկավարին եւ անդամներին:

Աղոթք ենք բարձրացնում, որ Տերը Իր ամենախնամ Աջի հովանու ներքո խաղաղության ու բարօրության մեջ պահի Ավստրալիան եւ այստեղ բնակվող մեր ժողովրդին, պայծառ պահի մեր եկեղեցիները, մեր ազգային հաստատությունները:

Մենք հրաժեշտ ենք տալիս ձեզ խաղցր հիշատակներով հիշողություններով, որոնցով պիտի վերադառնանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ պիտի աղոթենք ձեզ համար, Սիդնեյի եւ Մելբուռնի մեր հավատավոր զավակներիդ համար՝ հայցելով Տիրոջ օրհնությունն ու շնորհները ձեր ընտանիքներին:

Թող Տերը խաղաղ պահի Ավստրալիան, խաղաղ պահի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, հավատքով ամուր՝ մեր ողջ ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ օրհնի մեր ջանքերը ի սեր մեր կյանքի առաջընթացի ու բարգավաճման, մեր Եկեղեցու հավետ պայծառության:

Թող Տիրոջ սերը, շնորհները եւ օրհնությունը լինեն մեզ հետ եւ բոլորի այսօր եւ միշտ. ամեն:

* * *

Նույն օրը երեկոյան ավարտվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի կատարած հովվապետական այցը: